Ձիթհանման գործողություններ կառավարող կոչվում էր հիրպան։

Ոսկված, հմտված յուղատաքիկ փոքրինաի վերածվելուց հետո, երբ այն լցնում էին սաղմ պարկերի մեջ և դնում էին ձեղնի ծակի տակ դրված կոնների վրա ու երբ պողոսակի և ճախարակի դեր կատարող բարի միջոցով դերանները հնշում էին պարկերին, դերանների մյուս ծայրերը, որ դեռևդված էին պատի մեջ բացված փակ պատուհանում, արջուկների ազդեցությամբ ու պողոսակի միջոցով դեպի վեր բարձրանալով, հասնում էին վերի սասի բարև հենակին և կանգ առնում։ Լծակների հընչմամբ ամենաուժեղ կերպով դերանները դեպի վար էին հրվում, որով դիրքում շարված պարկերից ձեթը բամվում և հոսում էր ձիթավազանը։ Այդ գործողություններ կառավարող վարպետը կոչվում էր ձիթման։

Հնշումը աստիճանաբար ավելացնելով, մեկ օրվա ընթացքում ձեթը բոլորովին բամվում էր և պարկերում մնում էր պնդացած խյուսը՝ կոպտունը։

Այն բանվորը, որը հսկում էր գոմեշի աշխատանքին և ձեռքի կելպերիով հատիկները քաշում բարի տակ ու միշտ խառնում կալը, կոչվում էր եռը։

Ահա մոտավոր բնութագիրը մեր նախնիներից մեզ ավանդ ձգված և նախնական պայմանների տակ մինչև մեր օրերը հասած ձիթհանի։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Դերսիմն իր լեռնաշխարհով անասնապահական շրջան էր։ Հարուստ արոտատեղիները, անտառածածկ սարերը, հորդառատ գրերը հնարավորություն էին տալիս դարկ տալու անասնապահությանը։ Անասնապահության մեջ հիմնականը խաշնարածությունն էր, խոշոր եղջերավոր անասունները (կով, եզ), համեմատաբար փոքր տոկոս էին կազմում, իսկ գոմեշ բոլորովին չէին պահում։

Խաշնարածությունն էլ առավելապես բրդերի դրադմունքն էր։ Ամեն տնտեսություն, նայած իր ուժերին՝ 50-ից մինչև 500, տեղ-տեղ նույնիսկ ավելի այծ և ոչխար էր պահում։ Թեև հայերից էլ ոմանք պահում էին ոչխարի հոտեր, բայց հովվության պատիվը բրդերին էր վերապահված։

Եթե հայերի գլխավոր զբաղմունքը երկրագործությունն էր, ապա բրդերի գոյության միջոցը խաշնարածությունն էր ապահովում։

Դերսիմի լեռնաշխարհի անասնապահությունը անցնում էր երեք հերթական փուլերից։

Ա. Մսուրային շրջան, որն սկսվում էր նոյեմբերի 1-ին և վերջանում մարտի 31-ին։ Այդ ժամանակաշրջանում (հինգ ամիս) անասունները պատսպարվում և կերակրվում էին ախոռներում ու գոմերում։

Բ. Գարնանը և աշնանը, գյուղերից դուրս, ձորամիջերում աղրլային շրջանն էր, երբ անասունները գիշերում էին հատուկ շրջափակոցներում (աղրլ) և արտատնային կամ արտադյուղային գոմերում, որն ընդգրկում էր ապրիլ, մայիս, ապա՝ հոկտեմբեր ամիսները։

Գ. Ամռանը սարի (յայլա) շրջան, ուր անասունները մնում էին բացօթյա նախիրներում և մակաղատեղիներում։

Սարադնացությունն էլ ուներ իր դասավորումները, այսինքն՝ ամիսը մեկ անգամ փոխել սարատեղը, մի շարք գյուղեր ունեին երեքից-հինգ սարատեղ, որոնք գտնվում էին տարբեր վայրերում։ Կալինատնտեսության ամենաարդյունավետ շրջանը սարային էր, որը տևում էր չորս ամիս՝ հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի վերջը։

Հերթական կարգը պահպանելու համար սկսենք դարնան արոտից և վերջացնենք մսուրային շրջանով։

Մարտի քսանից հետո, երբ հողն աղատված էր լինում ձյան ծածկոցից ու սևացած և սկսվում էր ծլարձակումը, դերսիմցին պատրաստվում էր արտադյուղային գոմերի և շրջափակոցների շրջանին։

Մինչև ապրիլի մեկը խոշոր եղջերավոր անասունները խամից հանում, ոչխարն ու այծը կարճ արշավնիրով արոտի էին տանում, դես ու դեն մաս ածում ու երեկոյան վերադարձնում դյուղի գոմերը, իսկ ապրիլի մեկին արդեն արտադյուղային գոմերում և աղրլներում ծխում էր ավանդական օջախը, որը վառելու կրակը գյուղի տան անմար օջախից էին բերում։

Մինը, որ սկսվել էր դյուղական գոմերում, շարունակվում էր արտադյուղային կիսաամառանոցներում, ծնում էին դաշտում, հանդում, սարում և աղրլներում։

Անասնապահը դեռ աշնանը նկատի էր ունեցել ձիրը անվնաս անցկացնելու անհրաժեշտ պարագաները ու եթե գյուղի մարագներում խնամքով տեղավորել էր ձմռան հինգ ամսվա անասնակերը, չէր մոռացել նաև արտադյուղային գոմերի ծնի շրջանը, դոնե մինչև մայիսի մեկը։

Հովվի մասնագիտությունն էր՝ հասկանալ, թե ոչխարը կամ այծը երբ է ծնելու. նա ճանաչում էր նույնիսկ երկվորյակ ծնող մարին կամ այծը և ըստ այնմ միջոցներ ձեռք առնում նրանց կերի, հսկո-

9—61

ղության և արոտի համար։ Երեք ուլ ծնող այծ և երկու դառ բերող մաքիներ շատ կային, սակայն միջին հաշվառման թիվը 100 մաքիի դիմաց 100 դառ ստանալն էր, քանի որ հոտում կային նաև անծիններ (ստերջ), իսկ լավ խնամված հոտերը և փորձառու հովիվները 100 ոչխարից ստանում էին 105-ից մինչև 120 գառ, 100 այծից՝ 120-ից մինչև 140 ուլ։

Ծնի շրջանն սկսելուց 15 օր առաջ փոխվում էր ոչխարների կերը։ Նախ, անջատում էին թոզլիները, շիշեկները, խոյերը և անծին ոչխարները, մնացյալին կերակրում էին անտառային կաթնահամ խոտի վրա ցանված գարու, ֆիկի կամ քուշնայի թթվեցրած յաումայով (խոշոռուկ), որը տևում էր մինչև ծինը և ծնից հետո մինչև ապրիլի վերջը՝ արոտի լավագույն շրջանի սկսվելը։

Ամեն օր փոխվում էր ծնա պատրաստվող ոչխարների տակի խուշկին, բացի սահմանված անասնակերից, տրվում էր նաև լրացուցիչ կեր՝ պուտեն, որը հատկապես շատ էին սիրում այծերը։

Ծնելու մոտեցող ոչխարներին և այծերին հնարավորության սահմաններում արոտի էին տանում մոտակա վայրերը, այծերին հեռու պահելով անտառներից և ժայռերից, ամեն գնով արգելում էին ցատկումները, խոյանքները, մագլցումները։

Նոր ծնող կենդանու (կով, այծ, մաքի) առաջին օրվա կաթը չէին տալիս նորածնին, որովհետև խրծը զորավոր էր գալիս, հիվանդացնում էր նորածնին, մանավանդ տկարակազմ գառներին, իսկ հորթերին լուծ էր պատճառում։ Խրծը կթում և ղալ էին պատրաստում։

Ծնի օրերին հովվական ընտանիքում ընդհանուր եռ ու դեռ էր լինում, չորացնում էին մոր կողմից լիդված և մաքրված հորթը, գառը կամ ուլը, տաքացնում և կերակրում արոտավայրերում ծնածներին, գուրգուրում, փայփայում ու հոգածությամբ առանձնացնում փոքրերին դրանց հատկացված գոմանկյուններում, որպեսզի դիշերը մեծերի տակ չընկնեն ու ճմլվեն։

Ասվեց, որ ապրիլը և մայիսը արտաղյուղային գոմերի և աղբլների շրջանն էր, որտեղից էլ անասունները տարվում էին արոտի։ Ապրիլին կթվում էին, իսկ մայիսին սկսվում էր պերը։

Պերատեղը գտնվում էր օրվա արոտավայրի մոտ, դյուզից և ցանքսերից հեռու մի տեղ։ Որքան փոխվեր արոտավայրը, նույնքան փոխվում էր պերատեղը։

Հոտը արևածագը դիմավորում էր արոտավայրում, իսկ պերի էր գալիս կեսօրին։ Պերվորը դիտեր, թե այսօր որ պերատեղում էր դիմավորելու հոտին։ Պեր գնալը պերվորուհու ամենամեծ հաճույքն էր, այնտեղ էին հավաքվում գյուղի ջահել հարսներն ու աղջիկները, որոնց մասին գյուղացին հորինել էր երգ.

Երկու ները կերթան պերը,
Շատ աղկեկ էր պզտակ ները.
Երկու քիրը կերթան ջուրը,
Շատ աղկեկ էր պզտակ քիրը։

Հովվական կյանքի անուշությունը այն էր, որ մարդն իր սեփական հոտի հովիվն էր լինում և ոչ թե ծառա՝ բեկին կամ աղային։

Երեկոյան կերից հետո, հոտը դուրս էին բերում գիշերային մոտիկ արոտի։ Գիշերային արոտի ժամանակ հովվի շան պարտականությունն էր շրջել հոտի շուրջը և թույլ չտալ անխոհեմներին անջատվելու և հեռանալու հոտից։

Արտագյուղային գոմերի երրորդ ամիսը հոկտեմբերն էր, երբ հոտերը սարերից վար էին իջնում ու երբ անասուններին վարժեցնում ու նախապատրաստում էին մսուրային շրջանին։

Անասնապահը իր հոտի գերակայությունը և բազմածնությունը կապում էր խոյերի (ղոչ) և նոխազների (թեքե) սերնդագործության հետ և բացառիկ ուշադրություն էր դարձնում ազնվացեղ, առողջ սերնդագործողներ ունենալուն և պահելուն։ Վաղաժամ ծնունդը կանխելու համար խոյերն ու նոխազները առանձին էին պահվում և հոտից հեռու արածեցվում ու միայն հոկտեմբերի 15-ից հետո խառնվում հոտին։ Այս շրջանում խոյը, նոխազը, կամ ցուլը վարձով չէին տալիս, ամեն մի տնտեսություն ուներ իր սեփականը, իսկ եթե պատահեր, որ ցեղը ազնվացնելու և կամ չքավորության պատճառով ղիմեին խոյատեր հովիվների աջակցությանը, նա տալիս էր իր խոյը կամ նոխազը առանց որևէ վարձատրության։ Նման պարագաներում վարձը վերցնելը անպատվություն էր համարվում, բայց տալիս էին ոչ թե բերշենկը (իր հոտի ամենալավ խոյը կամ նոխազը), այլ երկրորդական արժեք ներկայացնողը, որովհետև ամեն մի հովիվ ձգտում էր, որ իր ոչխարը ավելի խոշոր լիներ, առատ կաթ և շատ բուրդ տար, մանավանդ զույգ դառներ ծներ։ Մինչդեռ դաշտային դյուզերում, ուր անասնապահությունը սակավ էր և ամեն մի տնտեսություն չէր կարող իր խոյը կամ նոխազն ունենալ, դրանք վարձով առյր օրինական էր համարվում։

Թեև քաղաքացիք արհամարհում էին հովիվներին և «լեռնցի չոբան» վիրավորական մակդիրով որակում նրանց, իրականում հովիվն ավելի շատ



Նկ. 9. Զամբյուղի տեսակներ։ 1. չաշան (հարդ կրելու)—ա) բեռակ (բեռնոց), 2. մակրենց (մակարդի վրա դրվող բլոց), 3. քլոց (խաղող կրելու), 4. քլոց (թրիք թափելու)—ա) թեռակ, 5. բլոց (մեծ անասունների կերի՝ հարդի չափ), 6. բլոց (փոքր անասունների կերի՝ հարդի չափ)։

գիտելիքներով էր օժտված, բան որևէ արհեստավոր։ Փորձառու հովիվն ինչքան ծախնգիր էր և հոգատար իր շան նկատմամբ, նույնքան և հետամուտ էր իր ղոչը և բերեն ընտրելիս, աշխատում

էր ամեն գնով ձեռք բերել վայրենի և ընտանի ոչխարների ու քարայծերի զուգավորումից սնունդ առած սերնդագործողներ։

Ընդունված կարգի համաձայն սերնդագործությունը ապահովելու և բեղմնավորությունը չտկարացնելու համար անհրաժեշտ էր 25—50 ոչխարի համար պահել երիտասարդ, առողջ և խոշոր կազմվածքով մի խոյ, 30—60 այծի համար՝ վիթխարի մի նոխազ։ Երբեք, ամենաուշը հինգ տարին մեկ անգամ փոխում էին սերնդագործներին։

Ոչխարը (օշխար) հավաքական անվանում էր, որը տրվում էր հոտին (սյուրի) և որն ուներ իր ստորաբաժանումները՝ գառ, թոխլի, շիշեկ՝ հենված տարիքային տարբերության վրա։

Գառը բոլորին ծանոթ նորածինն էր՝ մինչև կաթից կտրվելը, որի հոտը առանձին էր կազմվում։ Թոխլին մի տարվա գառն էր, որը խառնվում էր ոչխարի հոտին։ Շիշեկը չափահաս էգն էր, որը աշնանը բեղմնավորվելու էր։ Թոխլիները երկրորդ տարին լրանալուն պես, երբ համարվում էին հասուն, բաժանում էին երկու խմբի, էգ թոխլիները որպես ոչխարացու կոչվում էին շիշեկ, իսկ արու թոխլիների մեծ մասը վաճառվում էր թոխլի հավաքողներին, իսկ ամենաընտիրները անցնում էին խոյացուների կարգը և կոչվում էին զոչցու։ Շիշեկը ծնելուց հետո դառնում էր մաքի (մայր ոչխար), իսկ զոչցուն՝ խոյ։ Կային և վազածին դառներ, որոնց թոխլիությունը և շիշեկությունը միախառնվում էր իրար՝ նույն տարվա կանուխ ծնած գառը, դեռ մի տարին չլրացած, ութից-ինը ամսում դառնում էր թոխլի, տարում՝ շիշեկ և նույն աշնանը զուգավորվում էր։ Դրան թեզ ժմնած շիշեկ էին անվանում։ Սա մեկ տարի ավելի կանուխ դառնում էր մաքի։ Դիտված էր, որ շուտ ժմնող շիշեկի գառը ավելի փոքր էր լինում, քան բուն շիշեկինը և կաթն էլ պակաս։ Պարագան նույնն էր և այծերի վերաբերյալ։ Սրանք էլ ոչխարի նման անցնում էին տարիքային աստիճաններ՝ ուլ, քոռիտ, չեպին։

Ուլը բոլորին ծանոթ ուլճիկն էր։ Քոռիտը մի տարեկան ուլն էր։ Չեպինը չափահասության հասնող և նույն աշնանը սերնդագործելու պատրաստվող քոռիտն էր, որ ծնելուց հետո դառնալու էր այծ։

Ինչպես թեզ ժմնող շիշեկներ կային, նույնպես և կային թեզ ժմնող չեպիններ։ Այծերի մեջ համեմատաբար ավելի մեծ թիվ էին կազմում վաղաժամ արբունքի հասնողները, որոնց քոռիտության և չեպինության շրջանները մի խառնվում էին իրար։ Քոռիտ էր մի տարվա ուլը, առանց սեռի տարբերության, բայց երբ հասնում էր չեպինության շրջանին, փոխվում էր և զանազանվում թե սեռը և թե անունը՝ էգ քոռիտը մկրտվում էր չեպին, իսկ արուն՝ թեքեցու (ապագա սերնդագործող նոխազը)։

Հոտը իր ամբողջականության մեջ կազմում էր վերը նշված համացեղ խմբերից։

Այծերի մի մասը պատկանում էր թիֆթիկ ունեցող ցեղին, որի մազը բրդից ավելի նուրբ և փափուկ էր լինում։ Թիֆթիկ տվող այծերի ցեղախումբը կազմում էր ընդհանուր քանակի 30 տոկոսը, որն ավելի մեծ ուշադրություն ու խնամք էր պահանջում, քան սովորական այծը։ Թիֆթիկավոր այծերի սերնդագործության համար պահվում էին թիֆթիկավոր նոխազներ, այլապես մյուս այծերի հետ համախառն կենակցությունը այլասերում էր ցեղը, որով կորչում էր թիֆթիկ տալու հատկությունը։

Հոտի առաջին խուզը կատարվում էր սար բարձրանալուց առաջ, նայած տարվա եղանակին, իսկ երկրորդը սարից արտազյուղային գոմեր իջնելուց առաջ։

Նախքան ոչխարը կամ այծը գրիելը (խուզել), նախ գետերում կամ լճերում մի լավ լվանում ու մարդագեանի վրա չորացնում էին ոչխարներին և այծերին, ապա տասնյակ մասնագետ հովիվներ, նույնիսկ կանայք խուզում էին։

Յուրաքանչյուր ոչխարի և այծի երկու խուզից միջին հաշվով սաացվում էր մի լիտ (մի լիտր, որը հավասար էր վեց հոխայի) բուրդ կամ մի լիտ մազ կամ նույնքան թիֆթիկ։

Առհասարակ այծերը ավելի մաքուր էին լինում, քան ոչխարները։ Խուզված բուրդը, որ կոչվում էր յաբազ, մի կտոր էր, որը պլատում էին առանձին ու դարսում մեկմեկու վրա, մինչև որ փոխադրվեր դյուզ և հանձնվեր մշակման կամ վաճառքի։ Այս վերջինը կատարվում էր փոխանակության կարգով։

Ամեն տնտեսություն իր հոտերը պահում և խնամում էր իր սեփական հովիվներով։ Խաշնարածությամբ պարապող տնտեսության անդամների մեծամասնությունը որակյալ և փորձառու հովիվներ էին, իսկ փոքրամասնությունը՝ հողագործներ։

Խաշնարածի անհրաժեշտ օգնականը շունն էր։ Օշիրի շունը շոպնի զավակը, եղբայրը և ընկերն էր։ Հոտի շան սպանությունը համազոր էր զավակի կամ եղբոր սպանությանը, հովիվը մինչև չկերակրեր իր շներին, ինքը չէր ուտի։ Պատահել են դեպքեր, երբ կռիվների ժամանակ հացի կամ լակի

այլուրը չեն նարոտանում սար հասցնել. հովիվն ինքը անոթի է մնացել և իր բաժին հացը կամ այլուրը իր շներին տվել։ Առանց լավագույն շների հոտը սարում պահել հնարավոր չէր։ Որը շուներ դայլ էր խեղդում, ավագ հովվի պարտականությունն էր իր ձեռքով ամուր շինել և դելիխեղդ շան հակառակ համբուրելուց ու գլուխը շոյելուց հետո, անձամբ կերցնել նրան, իսկ շուներ զգալով այդ առանձնահատուկ վերաբերմունքը, նախ լիզում էր ավագ հովվի ձեռքերը, ապա ուտում ամուրը։ Իսկ մեկից ավելի դայլ խեղդող շներ պահելու իրավունքը վերապահված էր ասն մեծին՝ ընտանիքի պապին կամ մամուն։ Եթե նրանցից մեկն ու մեկը սարում չէր, շուներ արոտավայրից դուրս էր գալիս և թռնելով պապի սարերի առջև, երեք անգամ հաչում էր. պապը կամ մամը ասանց հովիվներից տեղեկություն ստանալու պատահածի կամ կատարվածի մասին, անմիջապես հասկանում էին, որ շուներ մեկից ավելի դայլ է խեղդել, անմիջապես գրկում և հակառակ համբուրում էին, գովում, ապա իրենց ձեռքով պատրաստած ամուրով կերակրում։ Շուներ լավ կշտանալուց և մի քիչ հանգրստանալուց հետո, ասանց որևէ ցուցմունքի կամ նշանի, վերադառնում էր հոտի մոտ։

Հովիվը հոտի տերն էր, իսկ հոտը նրա դուրգրանների առարկան. հովիվը՝ հոտի տերը, իսկ հոտը հովվի հպատակը, մեկը մյուսից անբաժան և մեկը մյուսին լրացնող։ Ոչ թե ի պաշտոնե, այլ ի ծնե հովիվը կարող էր իր ընտանիքից և գավակներից հետո ապրել, բայց իր հոտից բաժանվելը հովվի մահն էր։

Եթե շուներ հովվի կողմից վարժեցվում էր, ապա դայլն ի բնե վարժ էր։ Գայլերը հաճախ փորում էին գոմի հիմքը և ոչխար գողանում, տանիքի երդիկից իրար շղթայված գոմը իջնում և ոչխար վեր հանում կամ ագրլի գոց դուռը բաց անում և ներս իջկվում։

Գերսիմի բնակիչները (առանձնապես բրգերը), գրեթե ի ծնե հովիվներ էին՝ երեխայությանը գառնարած, եղնարած (էղնարոտ), հորթարած, պատանեկությանը՝ հովվի օգնական։ Ծնվում, մեծանում և մահանում էին սարերում կամ գոմերում, միշտ անբաժան իրենց սիրելի այծերից ու ոչխարներից, որով կազմավորվել էր խաշնարած մի ժողովուրդ։

Հովիվը հասկանում էր ոչխարի լեզուն, գիտեր, թե հոտը երբ գեպի վեր, գեպի սարերի բարձունքը պետք է առաջնորդել, գմակը մեծացնելու համար երբ պետք է հրավիրել հանգստի, որ կերածը որուռա և կաթի վերածի։ Փորձառու և վարժ հովիվը պետք է ծանոթ լիներ հովերի բնթացքին, սարերի գիրքին, արոտավայրերում աճած խոտերի դրությանը (թե որ խոտը, ծաղիկը կամ բույսը առատ կաթ տալու հատկություն ունի և որը գիրացնելու, գմակը մեծացնելուն է ծառայում)։

Ընդունված սովորություն էր, որ միևնույն սարում կամ արոտավայրում երկու օրից ավելի չէր կարելի արածեցնել հոտը, բերնփոխ անասնակերը մեծ դեր էր խաղում կաթնատվությունը, քաշը ավելացնելու գործում։

Հովիվն ուներ իր անգիր կերացուցակը, գիտեր, թե որ օրը ինչ է հրամցնելու հոտին։ Ամեն մի հոտ նվազագույնը շաբաթը երեք անգամ արոտավայրը փոխում էր, այնպես որ մինչև երկրորդ անգամ առաջին արոտավայրը հասնելը, խոտն արդեն աճած և արոտատեղը դույնը փոխած էր լինում։

Արտադյուղային գոմերի կամ ագրլների շրջանը ավարտվելու նախօրյակին համայնքը պատրաստվում էր բարձրանալու սարերը, որոնց գագաթները և վերի ձորամիջները դեռ ձյունածածկ էին։ Սարատեղերը (յայլախ) բնորվում էին առհասարակ չորս կողմից լեռնագագաթներով շրջապատված ձորամիջներում, ուր կար շատ թե քիչ հարթ լեռնագաշտային մակերես, վազան ջուր, սառնորակ ակեր։ Սարատեղը ընդհանրապես պաշտպանված պետք է լիներ քամիներից և հոսանքներից, առհասարակ նախապատվություն էր տրվում անտառամերձ վայրերին և կամ անտառային բացատներին։

Հոտը կամ նախիրը սար բարձրանալուց մի օր առաջ լարվում էին վրանները, կարգի բերվում հոլիկները։ Հոլիկ էին կոչվում բարաշեն այն տները կամ տնակները, որոնք միայն պատեր ունեին. հատատուն ծածկ ունեցող հոլիկներ չկային։ Ամեն տարի վերանորոգվում էր հոլիկների ծածկը, որն առհասարակ զմբեթաձև էր լինում, շատ նախնական ու ինքնակենտրոնում հատատում էին կաղնի փայտից գիմացկուն մի սյուն, որի վրա հենվում էր ամբողջ ծածկի կառույցը։ Քարաշեն պատերի ամեն կողմից իրարից կես-կես մ հեռավորության վրա, գեպի կենտրոնական սյան վերին սկսվառակը երկարացվում էին կաղնի փայտից ավելի բարակ ձողեր, որոնք պիի ոզորով ամրացվում էին կենտրոնին և կապվում միմյանց։ Ծածկի կմախքը դատարատելուց հետո, որի կենտրոնական սյան բարձրությունը չորս, իսկ պատերի բարձրությունը երեք մետր էր լինում, բարակ հյուղերով ծածկում էին տանիքը, ապա հյուղերի վրա փռում շիրեմն խոտ, որը եղեղնի դեր էր կատա-

ռում և չորանալուց հետո թույլ չէր տալիս, որ անձրևի ջրերը ներս թափանցեն։ Կային հոլիկներ, որոնց առաստաղը ներսի կողմից ծածկում էին հատուկ այդ նպատակի համար թափված թաղիքով (բեչե), որը անթափանց էր և թույլ չէր տալիս ջրի կամ փոշու անցումը հոլիկի ներսը։ Հոլիկը լուսավորվում էր վերից թողնված փոքր լուսանցքերով, դուռը հյուսված էր լինում փայտե շյուղերից՝ կախված ծխնիի վրա, պիքի օգորների օգնությամբ։ Հոլիկում լինում էր մշտավառ օջախը, աղարթուի բաժանմունքը, պառկելու տեղերը։ Հատակը ծեփվում էր թրիքախառն կավով. Հոլիկի բնակչության մասն էին կազմում կատուն իր ձագերով և շունը, որը չէր գնում ոչխարի հոտի հետ և մնում էր հոլիկի մուտքի առջև որպես պահապան։ Հոլիկում թաղված էր լինում նաև թոնիր՝ լավաշ հաց թխելու կամ պիրան (լեռնականների ամենասիրած խորոված) կախելու համար, բայց յայլաներում առավելապես սաճե հաց էին թխում։ Նայած սարվորների բազմությանը, սաճե հացը թխվում էր ամեն օր և նույնիսկ օրը երկու անգամ։ Սար էին բարձրանում առավելապես գյուղական աշխատանքի (քաղ և կալ) անընդունակ ծերերը, մինչև ութ տարեկան երեխաները, ծծմայրերը։

Ընդհանրապես այծի մաղից հյուսված վրանները օժտված էին ամեն հարմարություններով։ Թեև հայերն էլ խփում էին վրաններ, բայց վրանը բրդերին յուրահատուկ էր նկատվում, իսկ հոլիկը՝ հայերին։

Հոլիկների վերանորոգման և վրանների լարման հաջորդ օրը ընդհանուր եռ ու զեռի տոնական օր էր լինում։ Առավոտը շատ կանուխ սկսում էին տեղափոխությունը։ Էշ, ջորի, եղ՝ բոլոր փոխադրական միջոցները հատկացվում էին սարվորներին։ Նույն օրն առավոտը արոտի դուրս եկող նախիրը և հոտը բշում էին ձորամիջով դեպի սարերը, մինչև որ դուրս գային ցանքատարածության սահմաններից և բռնեին սարերի ուղղությունը։ Հանդարտ գնացքով, առանց անասուններին նեղելու կամ հոգնեցնելու, սարալանջերով, կածաններով, լեռնագագաթների ստորոտից թեքվում էին դեպի արստատեղիները և երեկոյան հասնում սահմանված վայրը։

Պատահում էր, որ ճանապարհի չգոյության պատճառով հարևան գյուղի հոտն ու նախիրը ստիպված էր լինում անցնելու մեկից ավելի գյուղերի միջով։ Նման պարագաներում ընդունված կարգ էր, որ նախիրը կամ հոտը անցկացնել ոչ թե գյուղամիջով, կամ ցանքերի միջով, այլ ձորամիջով, մինչև հարևան գյուղի արտերի սահմաններն անցնելը։ Նկատի ունենալով, որ Դերսիմում գյուղերը ընդհանրապես գտնվում էին ձորափերում կամ ձորերի մոտի լեռնակողմներում, հեշտությամբ կարող էին անասուններն անցկացնել սահմանից-սահման, առանց մեկի կամ մյուսի ցանքատարածությանը վնասելու։ Պարագան նույնն էր և սարից վար իջնելիս. և որովհետև լեռները միշտ կցված էին լինում իրար, հեշտանում էր անասունների տեղաշարժման գործը։

Սարվորները, անկախ որ գյուղին, համայնքին կամ աղգությանը պատկանելը, եղբայրական վերաբերմունքով օգնում էին իրար։

Լեռնային արոտավայրերը բաժանվում էին երեք դոտիների, հետևյալ դասավորությամբ.

Ա. Համայնքային, որը ավյալ գյուղի սեփականությունն էր և սահմանաղծված ուրիշ գյուղերի փոխադարձ համաձայնությամբ։

Բ. Բոլորովին ազատ արոտավայրեր, որոնք ոչ թե մի գյուղի, այլ ընդհանուր շրջանի սեփականությունն էին։

Գ. Արգելված դոտիներ։

Առաջին դասին պատկանող արոտավայրերի (գյուղի բնակչության համայնական սեփականություն) սահմանները ճշտվում էին լեռնագագաթներով, նշանակներով, ձորերի ուղղություններով, սրբազան ծառերի, աղբյուրների կամ լճերի սահմանավորումով։ Այսպես, եթե մի սար տասից ավելի գագաթ ուներ, նայած դրա աշխարհագրական դիրքին և աչքառու որևէ ժայռի կամ լեռնանցքի գոյությանը, կազմում էր բնական սահման մերձակա գյուղերի միջև։ Կային ձորեր, որոնց աջափնյա տարածությունները, սարահարթերը, ծմակները և արոտավայրերը պատկանում էին սահմանակից գյուղի համայնքին, իսկ ձախափնյա շրջանը պատկանում էր մի ուրիշ գյուղի։ Զորն այստեղ իր երկայնքի և հոսանքի ուղղությամբ նկատվում էր բնական սահման և սեփականություն ավյալ գյուղի համայնքի, մինչև ասենք՝ Զաթալ քարերը, Թամքրա-կեռուկը, Փութայի չեքևմները, Կոլերի-սրրթը, Օխտն-ախպոր դոռները և այլն։ Գյուղամիջյան սահմանազծումներով ճշտված տարածությունները նկատվում էին նույն գյուղի համայնական սեփականությունը, ուր արածում էր տվյալ գյուղի նախիրը և հոտը։ Ուրիշ գյուղերի անասուններ իրավունք չունեին անցնել բնական սահմանը, այլապես առիթ էր տրվում արյունահեղ մարտերի։

Երկրորդ կարգի արոտավայրերը համարվում էին բնակությունից հեռու անմարդաբնակ սարալանջերը, որոնք ևս ունեին իրենց սահմանազծու-

ր. բայց ոչ գյուղական, այլ շրջանային սեփականության պայմաններով, որ կարող էին արածել ոչ թե այսին կամ այնին գյուղի, այլ այդ շրջանում գտնվող բոլոր գյուղերի անասունները։ Նման ագռատ արոտատեղիներն օգտագործվում էին միայն ստրադնացության ժամանակամիջոցում, երբ անասունները արդեն գյուղից մինչև յայլաները երկար տանապար էին անցել և ավելի մոտեցել ագռատ արոտավայրերին, այլապես գյուղից մինչև ագռատ արոտատեղիները հնարավոր չէր մի օրում հասնել։ Ագռատ նկատված արոտավայրերն էլ ավյոյ շրջանի տնձևոնմիների սեփականություն էին։ Դրանց մուտքն արգելված էր տարբեր շրջանների անասունների համար, եթե նախապես արտոնություն չէր տրված ավյոյ շրջանի համայնքից։ Կային շրջաններ, որոնք պետք եղածից ավելի արոտավայրեր ունեին, ուստի չէին օգտագործում կամ քիչ էին օգտագործում ագռատ գոտու իրենց սեփականություններ։ Նման պարագաներում, լեռնային ագռատ արոտատեղերը փոխադարձ համաձայնությամբ ժամանակավորապես տալիս էին պետք ունեցող գյուղերի կամ շրջանների համայնքներին։ Արոտավայրերի սեզոնային արտոնությունը կատարվում էր փոխանակության կարգով՝ այսքան ոչխարի կամ այծի դիմաց, այսքան ժամանակ հնար արածեցնելու իրավունքով։ Նայած ագռատ գոտու լեռնատարածության բուսական առավելություններին, սակայն տատանվում էր հինգ հարյուր գլուխ այծի կամ ոչխարի միջև։ Ստացված արոտավայրից բաժին էր հանվում հայերի (եթե հայեր կային ավյոյ շրջանում) վանքերին, բրդերի օջախին, անասունների պաշտպան փիրին (սրբին)՝ մատաղացուներ, թուրքերի դեմ մղված մարտերում սպանված մարտիկների որբ երեխաներին, հովիվներին և աղքատներին։

Ագռատ արոտավայրերում հանախ պատահում էր հոտերի միախառնում, նույնը պատահում էր նաև գյուղային սեփականության արոտներում։ Նման դեպքերում ձեռք չէին տալիս, չէին յուրացնում մոլորված կամ սխալմամբ հոտին խառնված անասունները՝ հոլային հարամ չէին խառնում. «Հարամը գալիս, հոլայն էլ հետն է տանում»,— ասում էին հովիվները և պահում ու տիրոջը վերադարձնում ոտար անասունները։

Այն հովիվները, որ վարձով արոտավայր էին տանում, վայելում էին վարձու ավող շրջանի աշիրեթի կամ աշիրեթների պաշտպանություն, որովհետև եկողները զոնախ (հյուր) էին նկատվում իրենց սարերում և նրանք իրենց օջախի պաշտպանությանը։ Քուրդը կամ իր դրացի հայը երբեք ոտքի տակ չէր տալիս «տախի նամուսը»։

Կորսված կամ գտնված անասունների սեփականության իրավունքը ապացուցվում էր հետևյալ կերպ։ Ամեն տնտեսություն ուներ իր նիշը, որը համադոր էր սեփականության իրավունքի վկայականի, ուրեմն՝ նիշով ամեն մի հովիվ կարող էր հաստատել անասունի սեփականության իրավունքը, որը օրենքի կարգ անցած, անխախտ կերպով հարգվում էր բոլորի կողմից։ Նշումը (նշան դնելը) կատարվում էր առավելապես անասունի ականջներին՝ մանր թե խոշոր եղջերավորների ականջի մի մասը դանակով կտրելով և կամ դաղելով։

Ահա այդ նշաններից (անասնապահական սեպագրեր) մի քանիսը, որոնք տարբեր համամասնությամբ գործածվում էին անասնատերերի կողմից։

1. Աջ ականջի ծայրը կտրել ուղիղ։

2. Կտրել աջ ականջի ծայրից մինչև երկու, երեքմն երեք մատ խորությամբ, ոչ թե ուղիղ, ինչպես առաջին նշանը, այլ վարի մասից հորիզոնական։

3. Կտրել լրիվ ականջի վերի կողմից՝ նույնպես շեղ կամ հորիզոնական, այսինքն՝ երկրորդ նշանին համաչափ, բայց վերի կողմից միայն։

4. Թիվ 1 նշանով կտրվածքի մեջտեղը կտրել մատիկաձև։

5. Առանց որևէ մաս կտրելու, ուղղակի ականջի վերին մասի կենտրոնում կտրել բոլորաձև կամ քիչ կորությամբ։

6. Կտրել աջ ականջի թե վերի և թե վարի մասի կենտրոններում՝ բոլորաձև։

7. Կտրել ականջի ծայրից շեղ, մինչև ականջի մեկ չորրորդը և ապա ուղիղ դեպի ականջի վարի մասը։

8. Ականջի ծայրից դեպի կենտրոնը, առանց բրևէ մասնիկ փրցնելու, ձեղքել ուղղակի։

9. Ականջի կենտրոնում կլոր ծակ բանալ շիկացած երկաթով, որպես արեղակ։

10. Թիվ 5 գծագրի նմանողությամբ փոխանակ մի նիշի, կտրել երկու նիշ՝ բով-բովի, ականջի վերին մասում։

11. Նույն ձևերը՝ փոխանակ վերին մասի, վարի մասում։

12. Բանալ փոքր խորություն թիվ 1 նշանի ձևով կտրվածքի կենտրոնում։

13. Նույնը՝ երկու կտրվածքով։

14. Թիվ 2 նշանի կտրված ձևի կենտրոնում կտրել փոքր խորություն։

15. Նույնն անել նույն ձևի վրա՝ կտրվածքի երկու փոսիկներով։

16. Նշան 3-ղում կտրված ձևին ավելացնել մեկ փոսիկ։

17. Նույն ձևի կտրվածքում կտրել երկու խորություն։

18. Թիվ 7 նշանի կտրվածքի վերին մասում ավելացնել կոր փոսիկ։

19. Նույն ձևը՝ կտրվածքի վարի մասում ավելացնել կլոր փոսիկ։

20. Նույն ձևը՝ կտրվածքի ուղիղ կտրված մասում մի փոսիկ։

32. Նույն ձևով կտրված ականջի վարի մասում՝ մեկ կորաձև խորություն։

33. Նույն ձևով կտրված ականջի վարի մասում՝ երկու կորաձև խորություն։

34. Նույն ձևով կտրված ականջի սուր ծայրը դեպի ներս կտրել խորացած ձևով։

35. Թիվ 18 նշանի ցույց տրված ձևի ուղիղ կտրված մասում ավելացնել ևս մի խորություն։

36. Թիվ 21 նշանի ուղիղ կտրված մասում ավելացնել ևս մի խորություն։

Ամեն պարադայի, մի ականջի վրա կատարված նշումները հասնում էին մինչև 60 ձևի, որի



Նկ. 10. Անասունի աջ ականջին արվող նշանները։

21. Նույն ձևը՝ կտրվածքի վերի մասում կտրել երկու փոսիկ՝ քով-քովի։

22. Նույն ձևը՝ կտրվածքի վարի մասում կտրել երկու փոսիկ առանց վերևը կտրելու։

23. Նույն ձևը՝ կտրվածքի ուղիղ կտրվածի մի շեղի վրա մի փոսիկ։

24. Նույն ձևը՝ կտրվածքի շեղ կտրվածի վերին մասում երկու խորություն։

25. Նույն ձևը՝ կտրվածքի շեղ կտրածի վարի մասում երկու խորություն։

26. Նույն ձևը՝ կտրվածքի ուղիղ կտրվածի վարի մասում երկու խորություն։

27. Աջ ականջի կենտրոնում՝ եռանկյուն ծակ, որ դաղում էին շիկացած երկաթով, առանց ուրիշ որևէ նշանի։

28. Նույն ձևով քով-քովի երկու եռանկյուն։

29. Կտրել ականջի ծայրի երկու կողմից և ականջին տալ սրածայր ձև։

30. Նույն ձևով կտրված ականջի վերին մասին տալ կորաձև խորություն։

31. Նույն ձևով կտրված ականջի վերին մասին տալ երկու կորաձև խորություն։

ամեն մի ձևը ներկայացնում էր մի տնտեսություն։

Այստեղ տրվեցին աջ ականջի նշանների մի մասի ձևերը և համապատասխան բացատրությունները։ Ուրեմն՝ ձախը մնում է անվթար, ու եթե նույն դյուղում ապրում էին վաթսուն տնտեսությունից ավելի, աջ ականջը ձգելով անվթար, առանց որևէ նշումի անցնում էին ձախ ականջին, որով երկու ականջի նշանները հավասարվում էին 120-ի, իսկ եթե ավելի բազմամարդ էր գյուղի բնակչությունը, ապա նիշերը անում էին երկու ականջին միաժամանակ, այսինքն՝ ցույց տրված ձևով։ Եթե աջ ականջի ծայրը ուղիղ և հավասար էր կտրված, նույն ձևով կտրում էին նաև ձախ ականջի ծայրը (նշան 1), որով զույգ ականջների համատեղ նիշերով երկու ականջը հնարավորություն էր տալիս 180—200 նշումների կամ նույնքան հովիվների կամ տոհմերի, ընտանիքների սեփականությունը բնորոշող նշանների։

Նշումները արվում էին անասունների մատղաշ ժամանակ, երբ դրանք դեռ խառնված չէին համայնական հոտին, այսինքն՝ դառները դասնարածին, հորթերը՝ հորթարածին, այդպիսով փոքրերը

մեծանում էին իրենց հետ մեծացնելով պատկանելության գրոշմը։

Եռոր եղջերավոր անասունները տարիքային հետևյալ խմբերն էին ունենում։

Հորթ՝ կովի նորածիններ, մոզի՝ մի տարեկան որթեր, երինջ՝ մի տարեկան մոզին, որն աշնանը սանում էր տրրուների, իսկ գարնանը սերնդագործման, կով՝ ծնող երինջը։ Մինչև մոզիությունը շրջանի ամարաբ, արուն և էզը չէին դանդաղանվում և չէին կոչվում տարբեր անուններով, արուն էլ, էզն էլ հորթ կամ մոզի էին, բայց երբ լրանում էր մոզիության շրջանը, կատարվում էր սեռերի տարբերակում՝ էզը կոչվում էր եռինջ, արուն՝ պուլա։ Եթե պուլան կաստրած չէր, հաջորդ տարին դառնում էր ցուլ, իսկ կաստրած պուլան անցնում էր եզների շարքը։

Ամենակը հետևյալ տարիքային խմբերն էր ունենում՝ բուտիկ (կամ բուտակ)՝ նորածիններ, սրտա (սիրտա)՝ մի տարեկան բուտակը, էշ (կամ ամանակ) լրիվ հասուն։ Ինչպես բուտակը, նույնպես և սիրտան սեռային տարբեր անուններ չունեին՝ արուն էլ, էզն էլ նույնպես էին կոչվում։ Սնելուց հետո էզը կոչվում էր Լաձ էշ և դանդաղանվում էր արուից։ Հայերը այդ դանդաղանությունը անում էին էզ էշի բնորոշումով, իսկ բրդերը նախապատվություն էին տալիս արուն դանդաղանել էզից, դրան կոչելով հերն (արու էշ)։

Վերը նշված սեփականություններ աշխատ նշանները օրինական էին նկատվում միայն այն դեպքերում, եթե նախապես համաձայնված էին լինում դյուղի սեռի և նրան ենթակա ՍՍՌՈՎ ժողովի անդամների հետ, նույն նշանը երկու կամ ավելի անասունության կողմից սխալմամբ չօգտագործվելու և թյուրիմացության տեղի չտալու համար։ Նշանների ստանման իրավունքը վերապահված էր ավագանուն, որի մասը արձանագրված էր, թե որ անասունները ինչ նշան է օգտագործում, այնպես որ, երբ կատվում էր անների բաժանը, նախ աշխատում էր, թե ում է մնալու տոհմային նիշը օգտագործելու իրավունքը և ինչ նշաններ են դրվածելու նոր անասուններ կատվողները։ Այսպես, եթե մի անասունության տոհմային նշանը ազատությամբ արված է-ն էր, նույն տեսակից բաժանվողները պահելով բուն նշանը, ավելացնում էին 18, 19, 20, 21 և 22 նշանները, նայած բաժանված անդամների կատվելիք անասունությունների բանակին։ Տոհմային նշանի գործածությունը մնում էր տան ավագին, մեծ եղբորը։ Բաժանվողները, բան կարգի, ավելացնում էին տոհմային նշանին իրենց ավելվածական նշանները, եթե, անշուշտ, այդ նշաններից մեկն ու մեկը չէր օգտագործվում նույն դյուղի համայնքի մի ուրիշ անդամի կողմից։ Նման պարագաներում նշանը մնում էր անփոփոխ, մինչև որ նորածինները նշվեին նոր նշանով, անշուշտ, ըստ սեռի կամ նրա օգնականների ցուցումների։

Անկախ տոհմային սեփականության նշանից, կային նաև գարդանշաններ, որոնք առավելապես օգտագործում էին աշրի բնակող, առատ կաթ տվող տոհմային անասուններին՝ էաբ ալ։ էաբ նազարլիգ, զաֆիլ-զատալիգ (հեղեղ, դայլ, ժայռերից վայր ընկնել) պաշտպանելու համար։ Այդ գարդանշանները բաղկանում էին առավելապես կապույտ հուլուններից (ուլուներ), որոնք կախում էին անասունների վզից, այծերի կոտոշներից, աշրի բնակող եղների ականին կապում էին ականոց, էշերի, ջորիների, ձիերի վզից կախում էին վզնոցներ՝ միշտ կապույտ ուլուներից։ Կային և եռանկյունաձև սեկի մեջ կարված հմայիներ, որոնց նուսխա էին ասում։ Կային անասունություններ, որոնք իրենց անասունների ականջներից կախում էին օղեր, միշտ նախապատվություն տալով կապույտ կամ բաց կանաչ գույներին։

Ամեն անասունություն ուներ իր տան գուրգուրանքի առարկա կովը, ոչխարը, այծը, եղը, ցուլը, էշը կամ ջորին ու ձին և մի առանձին հոգատարությամբ էր վերաբերում դրանց նկատմամբ, դրանց հետ կապում տան բախտավորության և օջախի բարգավաճման դաղանները, հավատալով, որ այդ կենդանիներից մեկն ու մեկը պաշտպանվում է բարի ոգիներից և վայելում նրանց հոգածությունը։ Նման պարագաներում անասունը (էհերտար) չէին ծախում, չէին մորթում, մինչև որ ծերանար և մահանար բնական կարգով, իսկ մարմինը թաղում էին անամերձ հողամասում, որպեսզի դրան պաշտպանող ոգին, սուրբը կամ աներևույթ փիրը չհեռանար տնից և իր պաշտպանությանտակ առներ մեռնողի սերնդից մի ուրիշին։

Անասնապահության մեջ բնդունված սովորությունն էր՝ ոչ որի չհայանել տան անասունների իրական թիվը, մանավանդ խաշնարածության բնագավառում։

— Խաչո, բանի ոչխար և աշ (այծ) ունես,— հարցուցին պատասխանում էր.

— Ի՞նչ գիտենամ Համբո, ասում ես՝ մեր ծին կան, տան ազարլուին հերիրում են, բան մնալ ա-

[1] Հայերդ տան անասունների սեփականության բնորոշիչ նիշը (տամգա) պահվում էր մինչև 1915 թ. ավելի բան 320 տարվա հարատևությամբ։

վելանում ասում հյուրերին։

Խիստ գաղտնի էին պահում նաև կաթնատու անասունի կաթի չափը, աչքի չգալու համար հաճախ թրիր էին քսում կովերի ուրին (պտուկ)։

Կենդանիները ցավից-չոռից պաշտպանելու համար ամեն յայլա ուներ իր դողի, չոռի, ցավի, տառատ կաթնատվության սրբազան ակունքները՝ մեկը բխում էր՝ Կապիտ (կապույտ)—ժայռի տակից, մյուսը՝ Կարմիր-լեռան կայմիր (կարմիր) բարևրից, երրորդը՝ սրբազան անտառի ծառերի արմատներից, չորրորդը՝ ծմակա քարերից։ Հաճախ կենդանիները արածեցնելու էին տանում մեկ կամ մյուս աղբյուրի շրջակայքը, որպեսզի խմեն տվյալ վայրի սուրբ աղբյուրի ջրից։

Ամեն շրջան ուներ անասունների պաշտպան իր սուրբը, այդ սրբերի վայրը, պաշտամունքի առարկա ծառը, ակը, ձորը, սարադաթը, անտառը։ Նման սրբատեղիներում ոչ վանքեր կային և ոչ էլ եկեղեցիներ, ոչ վեմ քարեր և ոչ էլ խաչքարեր, մի տեղ անտառն էր, մի ուրիշ տեղ ապառաժների ընդերքից վեր խոյացող միակտուր և շատ բարձր ցից քարը, մի տեղ էլ հաստաբուն հնադարյան հսկա արտուճների պուրակը, մի այլ տեղ՝ լեղի, թթու, անուշ, կաթնագույն ջրի ակը և կամ նույն ինքը սարի մի բաժանմունքը, որը արևկող էր և արևի առաջին ճառագայթներն ընդունողը։ Նման սրբատեղիներ, որոնց ոչ ծաղումը և ոչ էլ դավանական կարգը հայտնի էր, պաշտվում էին տվյալ համայնքի կողմից, որպես անասունների պաշտպան սուրբ։ Այդ սրբերը աղղություն, դավանանք, կրոնական բաժանում չունեին։ Սուրբը անասունների պաշտպան զորությունն էր և վերջ։ Հայն էլ, բուրգն էլ առանց խտրության հավաքաբար դնում էին ուխտի, իրենց զոհը մատուցելու ամենակարող սրբին։ Այսպես, Պալապանի լեռնաշխարհի Խնձորեկ գյուղի Կարմիր-լեռան յայլաներում անասնապաշտպան սուրբը Մոսկրուտի անտառն էր, որը գտնվում էր Հինգ-մատներ ունեցող մի ծաղկածածկ լեռան փեշերին։ Այդ լեռից սկիզբ էին առնում հինգ գետակ՝ մեկը բթամատի նման թեև հաստ, բայց ավելի կարճ, մյուսները գալիս և միանում էին միջմատանի կենտրոնական ջրին, որը բոլորից երկարն էր և անցնում էր անասնապաշտպան անտառի միջով։ Հինգ-մատներ սարալանջն ուներ մի ուրիշ առավելություն ևս՝ ամեն մի մատ կազմող հողատարածությունն ուներ տարբեր գույնի և տեսակի ծաղիկներ, կարծես թե մի բնական խաղ էր դա. բնությունն ինքը ստեղծել էր ծաղկարուծական ածուներ, մեկը մյուսից տարբեր և գեղեցիկ։ Եթե բթամատի սրունքը լեռնագագաթից մինչև միջնամատի միացման տեղը սպիտակին էր տալիս մարգարտածաղիկներով, ապա ցուցամատն ալ կարմիր էր, միջնամատը կապույտին էր տալիս, մատնեմատը՝ մանիշակագույն, իսկ ճկույթը դեղնավուն էր։ Այս հինգ գույն ունեցող ածուների ծաղկամարգերի հրաշագործությունը վերագրվում էր անասնապահ սրբի զորությանը, որի կենտրոնը սրբազան պուրակն էր, ուր խոտը աճում էր մարդահասակից ավելի։ Այս անտառն իր անունն առել էր բոզիների ընտանիքին պատկանող շատ համեղ տապկոցու և թթուցու մոսկորից։ Մոսկորի տապկոցն ավելի համեղ էր, քան գառան խորովածը, և այդ բոզին առատությամբ աճում էր սրբազան անտառում, որի ցողունը մատիտի հաստությամբ առանց տերևի բարձրանում էր մինչև 30 սմ և գագաթին ուներ մի շատ սիրուն ու նուրբ մագափունչիկ, ավելի նուրբ և կանաչ, քան սամիթի փուրը։

Սար բարձրանալուց մի շաբաթ հետո յայլաների համայնքը առանց սեռի և տարիքի կամ զավանանքի խտրության դնում էր ուխտի, այդ օրը ոչխարի հոտը, տավարի նախիրը, մի խոսքով մարդիկ թե կենդանիները, մեծով-պստիկով գալիս էին անտառ, անասունները՝ մինչ այդ կույս մնացած ծով կանաչությունը արածելու, իսկ մարդիկ՝ մատաղներ մորթելու։ Ուխտագնացության խրախճանքն ու տոնակատարությունը տևում էր արևածագից արևամուտ։ Մարդ թե անասուն այդ օրը արևածագը ողջունում էին սրբազան անտառում և արևամուտը դիտում մեծ բերկրությամբ, ապա վերադառնում յայլաները։

Ուխտագնացությունից հետո արտոնվում էր անասուններին արածեցնել Հինգ-մատների ծաղկամարգերում։ Ասում էին, թե սրբատեղիի արոտը արածող անասունների կաթնատվությունը բարձրանում էր անհամեմատ կերպով։

Անասունների պաշտպան սրբատեղիի ուխտագնացությունից հետո սկսվում էր սարվորների յայլագնացության բեղմնավոր շրջանը։

Մուրային շրջան: Անասուններին բացօթյա լեռնային արոտավայրերում արածեցնելը այնքան էլ դժվար չէր, որքան մսուրային շրջանում խնամելը։

— Օշխար չի ծնիր, մրսուրը ծնցրնի կը,—ասում էր փորձառու հովիվը, ակնարկելով այն ճրշմարտությունը, թե արոտից բերածը մսուրն է պահում։

Որակյալ անասնակերը (բաղած վայրի խոտն ու ցանովին) խոտհարից մինչև կալերի ավտրտը պահպանվում էր մարաններում, իսկ կալից հետո գարձյալ նույն մարաններում էին կուտակվում

կամնված բոլոր հատիկավորների հարգը և անասնակերի համար նախատեսված հատիկը։ Անասնակերը բնդհանուր բառ է, համագոր բնաղուներին և աղարիուին։ Դրա մեջ էին մտնում՝ վեց տեսակ հարդ ցորենի, գարու, մեռիմեկի, ֆիկի, բուշնայի, բիլուսի, տասը տեսակ գանազան վայրի խոտեր, երեք տեսակ ցանովի խոտ (տավուլյա, կոլրնգան, ոչ հատիկավոր ֆիկ), չորս տեսակ հատիկավոր (գարի, ֆիկ, բուշնա, պոյ), երկու տեսակ անասուից կարված ճյուղեր, պուրշ, սալի, դաղ, ձեռքամուկից մնացորդ կոմտուն (կոդտուն), ընդամենը՝ 20 տեսակ։

Դարին օժանդակ հացահատիկ էր։ Այն առավելապես առաջնակարգ անասնակեր էր, ի մասնավորի էշերի, ձիերի և ցորենների համար։ Եթե ձիուն, ջորուն և էշին գարին տալիս էին առանց աղալու և թթվեցնելու, հատիկները խառնած հարդի հետ, ապա մնացյալ անասուններին կերակրում էին ագացված գարու յուսումով՝ գարին թրջում, թթվեցնում և խառնում էին ակար անասունների հարդին կամ չոր խոտին, ստացվում էր մի տեսակ ապցան։ Գարու ցոցանն ավելի փիրուն և դյուրաբեկ էր, քան ցորենինը։ ուստի դրա հարդը համագոր էր լավագույն խոտին։ Անասունները ախորժակով ճաշակում էին գարու հարդը, նույնիսկ առանց խառնուրդի, քան թե ցորենի հարդը խառնուրդով։ Մարագներում առանձին տեղ էին տալիս գարու հարդին, այն չէին խառնում ցորենի կամ այլ հարդերի հետ։ Ինչպես գարու հարդը, նույնպես և հատիկը ավելի սննդարար, հյութեղ և ուժեղ էր, քան ցորենինը։ Ֆիկի հատիկները բիլուսից բավական փոքր, գորշագույն և շատ կարծր էին։ Այն յուսմայի վերածելուց հետո, թթվեցնում և ջրախառն վիճակում տալիս էին անասուններին, խառնելով ցորենի հարդին։ Բուշնան լավագույն անասնակեր էր, որի հատիկները ևս ֆիկի նման յուսմայի (խոշոր ագացված) վերածելուց հետո, թթվեցնում և ֆիկի ձևով տալիս էին անասուններին։ Սրա հարդն էլ հատիկի նման համեղ և գորավոր անասնակեր էր։ Պոյը թեև լրիվ հատիկային անասնակեր էր, բայց կարելի էր դասել ընդգեղների կարգը, որովհետև մարդիկ ավելի շատ էին օգտագործում և ուտում այն, քան անասունները։ Սրա հատիկն էլ ֆիկի և բուշնայի հատիկների նման խոշոր ագում, թթվեցնում և տալիս էին նիհարակազմ եղջերավոր անասուններին։ Մի ամիս պոյով սնված անասուն անճանաչելի էր դառնում՝ դիրանում և ուժեղանում էր։ Սակայն կամենատու անասունների ծնելուց մի շաբաթ առաջ դադարեցնում էին պոյով սնուցումը, որովհետև ծնող անասունի խիժը և կաթը այնքան գառնահամ էր լինում, որ ոչ հորթը և ոչ էլ մարդը չէին կարողանում այն ուտել։

Անասնակերը լավագույն կերպով օգտագործելու միջոցներից ամենագլխավորը բերնփոխի կերակրման ձևն էր։ Անասնապահը տարիների փորձառությամբ եկել էր այն համոզման, որ ամեն որ միևնույն կերով կերակրված անասուն գղվելով է ուտում այն, եթե նույնիսկ ամենասննդարար և ամենահամեղ կերը լիներ։

Հարդը տրվում էր ամեն օր, բայց խառնված ուրիշ կերի հետ։ Անասնապահը կազմում էր անասունների կերացանկը և բան այնմ պատրաստում կերը։ Տան գլխավոր անասնապահը կամ հովիվը բացակայելիս մյուս անդամները դիտեին, թե այդ որը ինչ կեր էր տրվելու անասուններին։

Մարագում դրված գանազան մեծության բլոցներ կային՝ եղան բլոց, կովի բլոց, մոդու բլոց և այլն։ Դրանք անասուններին ամեն ժամի տրվելիք հարդի չափերն էին, որով լցնում էին չամանը և տանում ախոռը, նույն չափով հարդը լցնում մաուրները, ինչ չափով որ նախատեսված էր ամեն մի անասունի համար։ Հարդի չափին հաջորդում էր մանրված խոտի կամ թթված հատիկի չափը, որը խառնում էին հարդին կամ խոտին։

Ասվեց, որ չորս տեսակ հատիկավոր կեր էին թթվեցնում։ Մարագի և ախոռի միջանցքում պատրաստած էին մինչև մի մետր բարձրությամբ, նույնքան խորությամբ և լայնությամբ չորս ավազաններ, որոնց պատերը կավով լավ ծեփված, թրծված և կոկված էին։ Դրանք լցնում էին խոշոր ագացված որևէ հատիկով, այսինքն՝ ամեն մի ավազանում նախատեսված յուսմայից մի տեսակ, ազով խառնում, վրան տար ջուր էին լցնում և թողնում, որ ինքնիրեն թթվի։

Շաբաթը մի անգամ հերթական կարգով պատրաստում էին այդ կերը և տալիս անասուններին։ Այսպես, երկուշաբթի՝ հարդ, հարդին խառնած լավ մանրված խոտ կամ գարի, մեռիմեկի, ֆիկի հարդ, վրան ավելացրած, ասենք, գարու թթվեցրած ջրախառն հատիկ։ Երեքշաբթի՝ հարդին խառնում էին բուշնայի հարդը (եթե երեկ ֆիկի հարդն էր), անշուշտ, ավելի քիչ բանակությամբ, քան ցորենի հարդը և վրան ածում այլևս ոչ թե գարու թթվածը, այլ՝ ֆիկի։ Չորեքշաբթի՝ բիլուսի հարդով խառն ցորենի հարդ, բուշնայի թթվով։ Հինգշաբթի՝ ցորենի հարդին խառն բուշնայի հարդ, ավելացրած խառնված և լավ ծեծված, հատոցով մանրացված մալի դաղ (անասնաղազ)։ Ուրբաթ՝ ցորենի հարդին խառնված մեռիմեկի հարդ և փո-

խանակ որևէ հատիկային թթվի, հարդերին խառնում էին լավ մանրացված առվույտ։ Շաբաթ՝ վերը նշված ձևով հարդի վրա ավելացնում էին պոյի թթու Կիրակի՝ հարդախառն ֆիկ կամ կորնդան և կամ կոպտուն, եթե ունեին։

Անասնադաղը զորավոր անասնակեր էր, աճում էր լեռներում, խորարմատ, հաստածղոտ և յուղալի էր, բարձրությունը հասնում էր մինչև 60 սմ և ամբողջ ցողունը լերկ, միայն բույսի ղազաթում ցանցաձև փշեր ուներ։ Այն արմատահան էին անում, օջախի վրա խանձում, ցողունը թակով կամ կացնի տյուպոյով (կացնի բութ և լայն մասը) լավ ծեծում կակղեցնում, մանր ջարդում, ապա խառնում հարդին։

Կոպտունը (կամ կովտուն) թեև սննդարար և ուժեղ անասնակեր էր, բայց առավելապես տալիս էին գոմեշներին և մատակներին։ Գործածում էին Եփրատի և Արածանիի աջ և ձախափնյա շրջաններում, ուր գոմեշների թիվը ավելի մեծ էր, եզների և կաթնատու մատակների դլխաքանակը կովերից ավելի էր։ Գետափնյա դյուղերում կամ դաշտային տարածություններում, ուր փոխադրական ղլխավոր միջոցը սայլն էր և արորը փոխարինված էր դութտնով, ուր հողը կորթ էր և վարելը դժվար, շրոսմների (չորս զույդ լծկան) քաշող ուժը գոմեշն էր։ Այդ էր պատճառը, որ կոպտունի դործածությունը ընդհանրացած էր այն շրջաններում, ուր բաշող ուժը գոմեշն էր և ուր անասնապահությունը երկրորդական և երրորդական տեղ էր դրավում, որով և ձեթի դործածությունը ընդհանրացած էր։ Մրցման համար պահված գոմեշները սնուցանում էին առավելապես կոպտունով, որը թե դիրացնում և թե ուժեղացնում էր անասուններին։

Դերսիմում աճում էր բացառիկ անասնակերի մի տեսակ, որը առանձնահատուկ էր միայն Մամիկի, Շենի, Արտաբերդի և շրջակա այն դյուղերի արոտավայրերին, որ դտնվում էին Մալ լեռան ստորոտում։ Այս բույսը, որ սեխի տերևների ձև, ոսկեդույն զանդակաձև փոքր ծաղիկներ ուներ և աճում էր շատ արագ, կոչվում էր ոսկեվազ, որովհետև ծաղկի բաժակում դտնված փոշին եթե քսվեր մի որևէ տեղ և կամ լուծվեր ջրով ու օդտագործվեր որպես ներկ, երկար ժամանակ պահում էր ոսկեդույն փայլն ու դեղեցկությունը։ Բույսը ծլելուց և թևեր նետելուց հետո արագ տարածվում էր խոտերի արանքում և ճյուղավորվում։ Սրա առավելությունն այն էր, որ առատ կաթ էր պարունակում և շատ համեղ էր, ճարակող կենդանիների ատամները ոսկեդծվում էին և ոսկեզծման փայլը պահում այնքան ժամանակ, որքան ոսկեվազը ծաղիկ էր տալիս։ Դեղնելուց հետո կորցնում էր իր կաթնատուր հատկությունը և փայտանում էր։

Ջիարեթ դյուղը դիմացի Պոզ լեռները զուրկ էին անտառներից, իսկ Կարմիր քարերի դագաթները՝ նույնիսկ բուսականությունից և սակայն այս սարերում աճում էր դազի երեք տեսակ։

Ա. Մինչև 40 սմ բարձրության ճյուղավոր հաստ ցողուններով փշածածկ բույսը, որը կոչվում էր դազ։ Սրա ցողուններից մեծաքանակ խեժ էին պատրաստում, որը հավաքվում էր տեղացիների կողմից և արտածվում մոտակա քաղաքները։ Օդտագործվում էր զործվածքներին փայլ տալու և թույլ հյուսվածքները ամրացնելու համար։

Բ. Ճիշտ ոզնու նման և ոզնու փշերով մի բույս, որը գրեթե ցողուն չուներ, հաղիվ գետնից բիչ վեր բարձրացած, ծածկվում էր անհամար փշերով և հովանոցաձև աճում ու մեծանում։ Սրան անվանում էին կոնկոլ և օդտագործում միայն կրակ բռնկեցնելու համար։

Գ. Մինչև 60 սմ երկարությամբ, ավելի հաստ ցողունով մի բույս, որի ճյուղերը լերկ էին և միայն վերի մասերը ծածկված փշերով։ Սրա ցողունը շատ յուղալի էր, օդտագործվում էր որպես անասնակեր։ Փշերը խանձում, ցոգունը լավ ծեծում, ապա հոտոցով մանրում էին ու ձմռանը ուրիշ կերի հետ խառը տալիս եղջերավոր անասուններին։

Անասունների կերակրելու և ջրելու կարգը։ Կերը տրվում էր օրը երեք անդամ՝ արշալույսը դեռ չբացված, կեսօրին և երեկոյան։

Անասնապահի պարտականությունն էր իր օդնականներով օրը երեք անդամ պատրաստել, մշակել և վերամշակել օրվա անասնակերը։ Եթե անասունները չէին բավարարվում տրված կերով, դիշերվա ժամը 10-ի մոտերը տալիս էր լրացուցիչ կեր (յաթսուլուխ) առանց թթունների, հարդին խառնված խոտ։ Սովորություն էր, որ տոնական օրերին, երբ տան սնդամներն ավելի ճոխ կերակուրներով, խմորեղեններով էին սեղան նստում, անասնապահն ու հովիվը անասուններին տոնական կեր էին տալիս, այսինքն՝ ամեն օրվա չափին ավելացնում էին որևէ անասնակեր, առավելապես ֆիկ, առվույտ և կորնդան, որովհետև մարդն ու անասունը հավասարապես դատում, բանում էին, հետևաբար, անասունն էլ իրավունք ուներ օգտվելու տոնական սեղանից։

Անասուններին ջրում էին օրը երեք անդամ՝ առավոտը և կեսօրին, կերակրելուց հետո, իրիկուները՝ կերից առաջ։ Նախ կեր էին տալիս, բայց չէին սպասում վերջացնելուն, կեսորը ուտելուց հետո տանում էին ջրելու, վերադարձին շարունակում

Լին. ուսել. ապա՝ հանդասանալ, որոշալ և նորից ուսել։ Առհասարակ ախոռներին և դոմերին կից գոտեր կային, որոնց կոգրին՝ ագրարեր, այսինքն՝ անկանի ձևով գետնից բավական բարձր սալ քարեր կային, վրաները՝ ագ։ Անասունները ջուր խմելուց հետո հերթով լիզում ու անցնում էին, բայց ոչ ամեն օր, այլ շաբաթը մեկ կամ երկու անգամ։

Անիական աղբյուրներ չունեցողները ազատվում էին հանրային աղբյուրներից և գյուղամիջյան ասոնների ջրերից։

Ախոռ և դոմ։ Անասնապահի գլխավոր զբաղմունքն էր օրը երեք անգամ հատուկ ցախավելներով մաքրել ախոռներն ու դոմերը՝ մինչև անասունների ջրելուց դառնալը։ Թրիքը հավաքում էին հատուկ թրքափոսերում, չոր խուշկի էին լցնում անասունների տակը, որ պառկելիս մարմինը հանգստանա, խուշկին անասունի անկողինն էր, մարմինը ջերմացնողը։ Այն փոում էին օրը երկու անգամ՝ առավոտ և իրիկուն։ Մայի տակը խուշկելուց առաջ նախ անասուններին սանրում, կեղտից մաքրում, ծաղիկ ավելով կոնակը քորում և թացությունը չորացնում էին, որից հետո միայն թրքափոսերից աղբը կալերն էին կրում։

Աղբը կրում էին ատն երիտասարդ տղաները. բլոցը, որով տանում էին դոմաղբը, ավելի խիտ ու հաստատուն էր գործված, կոնակը առնվելիք մասը՝ կաշեպատ, որպեսզի խոնավությունն չանցներ կրողի մեջքին։ Բլոցը կախված էր լինում թրքափոսի վերևը, թե անցքելու համար ունենում էր պարանից հյուսված երկու բևեռ (խուճակ), որպեսզի կրողը առանց ուրիշի օգնության կարողանար բլոցը շալակել և կալ տանել։

Հատուկ ուշադրություն էին դարձնում ախոռների և դոմերի մաքրությանը, առավելապես չոր պահելուն, թույլ չէին տալիս, որ թրքի անասունի տակ մնա, հերթապահը անմիջապես թրքամանով (եթե անմիջապես նկատում էր) և կամ ցախավելով մաքրում և թրքատուն էր նետում այն, իսկ ախոռների սալահատակին արված էր լինում այնպիսի թեքություն, որ տնասնաշեղ առանց որևէ տեղ լճանալու հոսեր դեպի թրքափոսը և այնտեղից ծորեր պատի մեջ թողնված անցքից դեպի առուն։

Խոշոր եղջերավոր անասունները մսուրների առաջ կապվում էին հյուսածո կապերով՝ ամեն մեկի վզի չափով (մեծ կամ փոքր), սահմանված չափի երկարությամբ, որ անասունը կապրշնա, այսինքն՝ ոտը չընկներ պարանոցի և մսուրի միջև դանվող կապին և չխեղդվեր։

Ամեն մի անասունի մսուրը և պառկելու տեղը առանձնացված էր լինում՝ մեկը մյուսի մսուրից կեր չուտելու և կամ պառկելուց մեկը մյուսին չանհանգստացնելու համար։

Անասունները մսուրներին կապվում էին բասեռի և գասի՝ պատվո տեղը տալիս էին սերնդագործող ցուլերին (պուղա), որոնք մսուրին կապված էին լինում շղթաներով և որոնց հաջորդում էին եզները, ապա կովերը, երինջները, մոզիները և հորթերը (վերջիններիս՝ հորթանոցում)։

Հատուկ զուրգուրանքի և հոգածության առարկա էին նկատվում ներմակ (սպիտակ) հորթերը։ Տնեցիները հրվանքի մեջ էին լինում, եթե կովը ներմակ հորթ էր ծնել, նման պարագաներում կովը դառնում էր պաշտամունքի առարկա, իսկ հորթը (արու թե էգ)՝ սրբազան մատաղացու, նվիրված Անահիտին։ Հավատում և հավատացնում էին, թե աստվածատուր այդ հղությունը կատարվել է լեռներում գեռ իրենց գոյությունը պահող (թեև ոչ ոք չէր տեսել) Անահիտի ցուլերի զուգավորումից։ Սպիտակածին այդ հորթերը չէին նշում տոհմային սեփականության տամղաներով, այլ հակատի մեջտեղը խարանում (տաղում) էին աստղաձև մի դրոշմ, որը ծնած անասունի Անահիտի տաճարին պատկանելու նշանն էր։ Անասնատերը, հովիվը, դրացին մի տեսակ երկյուղածությամբ էին մոտենում, զուրգուրում, սիրում և կերակրում նրան, իսկ տղջիկները գույնզգույն բրդե թելերից նախշուն փնջիկներ, հակատներ, վզնոցներ էին հյուսում և կապում թե մոր և թե հորթի հակատին, վզին, ականջներին։ Փնջիկներ կարելիս խնդրում էին մուրատատուր Անահիտից իրենց բաղձանքների կատարումը։ Էգին պահում էին մինչ երինջ դառնալը, իսկ արուին հատցնում պուղայության, երկու պարագային էլ կույս վիճակում գոհարներում էին Անահիտի կաթնաղբյուրներում, մեծ հանդիսավորությամբ։

Ձին, ջորին և էշը կապվում էին ջոկ-ջոկ և իրարից հեռու, ամեն միջոց նկատի էր առնվում մեկը մյուսին չխանգարելու համար։

Խուշկին չորացնում էին կալերում, եթե մոտ էին, և կամ գոմերի և ախոռների հողե տանիքներում։ Այն պատրաստում էին ոչխարների և այծերի կլտիկներից, նույնիսկ ձմեռ ժամանակ, երբ օդը պարզ էր, գոմերից հավաքված կլտիկները տանիք էին բարձրացնում, արևի տակ նոսր փռում, օրը մի քանի անգամ խառնում չորացնում և խուշկինոցի տանիքի ծակից վար թափում։ Ինչպես անասնակերը, նույնպես և խուշկին պետք չէր սպառել և

Հետո մտածել հարելու մասին, այլ ամուսնությունը պաշարը լրացնում էին գեռ բոլորովին չսպառված։

Անասունները ծախելու ժամանակ, բան սովորության, կապը հետը չէին տալիս, գնողը իր բերած կապով պետք է տաներ անասունին։ Կապ էր ասվում թեև, սակայն դա հյուսված մի պարան էր, որ երկարելով դեպի մսուրը, մի ծայրն անցվում էր մսուրին մեխված օղակին, իսկ մյուսը ամրացվում գնչկալի օղակին և որևէ արժեք չէր ներկայացնում, բայց և այնպես գնորդին չէին տալիս։ Ոչ ձին կեմով (սանձ), ոչ էշը յուլարով (գնչկալ) և ոչ էլ կովը կամ եզը կապով չէին ծախում, կապը պահում էին կապված մսուրին, մինչև որ տեղը նորը գար։

Ին։ Ին անասնապահության գլխավոր և պատասխանատու հոգսերից մեկն էր, մսուրային շրջանի աշխատանքը, անասուններին տված խնամքը արդարացնողը անկորուստ ծինն էր, որովհետև անասունների գլխաքանակը և կաթնատվությունը ավելացնելու ամենագլխավոր միջոցը առողջ հորթեր, դառներ կամ ուլեր ծնելն էր։

Ծնի օրերին խնամքն ու հսկողությունը կրկնապատկվում էր, ոչ միայն հովվի կամ անասնապահի, այլ ընտանիքի բոլոր անդամների պատասխանատվությունն էր հերթով հսկելու ծնի հաջող և անկորուստ անցկացմանը։

Չար աչքի դեմ պայքարելու, չար աչքը խափանելու համար աղոթք էին անում, աղ գցում թոնրի կամ օջախի մեջ, հմայիլ կախում ծննդկանի վզից, կապույտ ուլունք, սխտոր էին դնում ամանով ջրի մեջ և խմեցնում, երկաթի կտորներ կրակի վրա կարմրացնում և ջուրը նետում։

Ծնած դառան, ուլի կամ հորթի վրա բարակ աղ էին ցանում, որ մայրը լիզեր, կեղտերից մաքրեր, ապա պորտը կապում և մորից հեռացնում էին, որ խրժի չծծեր։

Ծնող անասունին գարու այլուրից մալեզ, խոտերից ամենափափուկը, կերերից ամենալավն էին տալիս, ու եթե մայրը իր ձագին էր որոնում, բերում էին մոտը, որ լիզեր, բայց միշտ հսկում էին, որ չծծեր։ Ու երբ ծննդյան մեկ օրը լրանում էր, կովը կթում և հորթի բաժինը թողնում էին այնքան, որ շատ ծծելուց չվնասվեր։

Նախշին ու չոպանը։ Հովվությունն էլ մասնագիտություն էր, անասնապահը իր կենդանիների ճակատագիրը պատահական մարդոց ձեռք չէր հանձնում, նա անասուններին վստահում էր փորձ ունեցող, անասունների վիճակից և լեզվից հասկացող, արոտավայրերի, խոտերի բնույթին ծանոթ հովիվների։

Փորձված հովվի մոտ երեք տարի ծառայող օգնականը հովվի կոչման իրավունք էր ձեռք բերում և առանձին հոտ կամ նախիր կառավարելու վստահության արժանանում։

Հովվությունն էլ ուներ իր տեսակային բաժանումները՝ սեփականատեր հովիվներ, ծառայություն կատարող հովիվներ, փոքր անասնատերերի կողմից վարձված հովիվներ։

Սեփականատեր հովիվն իր տան անասունների հովիվն էր, եթե տան անդամներից ոմանք երկրագործությամբ, որսորդությամբ կամ գյուղատնտեսական աշխատանքներով էին զբաղվում, հովիվն էլ համահավասար իրավունքով տան անդամն էր, հետևաբար հոտի կառավարիչը։ Նման հովվությունը գրեթե ժառանգական էր, հորը հաջորդում էր որդին, կամ պապին փոխարինում թոռը։

Կային մեծ անասնապահներ, որոնք իրենց սեփական հովիվը, այսինքն՝ տնից հասած չոպանը ունենալով հանդերձ, պահում էին նաև դրսից մնայուն հովիվներ։ Օրինակ՝ մի որբ կամ թշվառ, որ ծնող կամ ազգականներ չուներ և կամ միայն մայր ուներ, ծառայության էր մտնում անասնապահ հովվի մոտ, դառնում նախ գառնարած կամ հորթարած, իսկ մայրը օգնում էր տան աշխատանքներին։ Մայր ու որդի որևէ վարձատրություն չէին ստանում անասնատիրոջից, այլ որպես նույն տան հարազատ անդամը, ապրում էին միասին միևնույն հարկի տակ, ուտում, հագնվում և ծառայում անասնատիրոջ մոտ, մինչև որբը մեծանար, չափահաս դառնար։ Ապա անասնատերն իր ծախսերով ամուսնացնում էր նրան, հարսանիք անում, հարս բերում, նոր հարսն էլ վայելում էր նույն տան հարսներին համահավասար իրավունք, զատողություն չկար, բոլորն էլ աշխատում էին միասին։ Ամուսնության օրվանից սեփականատերը նոր կազմված ընտանիքի սպասելի ապահովության համար, բացի կերցնելուց, հագցնելուց, նոր ամուսնացողներին նվիրում էր 5 էգ գառ և 5 էգ ուլ, մեկ էգ հորթ և տարվե-տարի շարունակաբար։

Սեփականատիրոջ տոհմային նիշին (տամղա) ավելանում էր մի խաղ ևս, որը հաստատում էր նոր տնտեսության սեփականության իրավունքն իր ստացած գառների և ուլերի վրա, այսպիսով տարվե-տարի նույն հարկի տակ ապրում և բազմանում էր եկվոր հովվի ընտանիքն իր անդամների հետ, նաև՝ ոչխարների և այծերի բանակը։

Սեփականատերը, երբ իր հոտի բուրդը, արու թոխլին կամ թեքեցուն վաճառում էր, վաճառում էր նաև իր ծառայի ավելցրած և վաճառքի ենթակա անասունները, որոնց փոխարժեքը պահվում

էր առանձին, մինչև որ հովիվը սեփական հոգ գնելու, տուն շինելու, մինչև հարյուր ոչխար կամ այծ, տասը կով ունենալու վիճակին էր հասնում և ցանկանում տիրոջից բաժանվել ու իր սեփական տնտեսությունն ունենալ։ Նման պարագաներում անասունները հոնում էր արդեն կնոջ և զավակների տեր եղող իր նախկին ծառային տուն, ախոռ և դում կառուցելու ու իր սեփական օջախը հիմնելու։

Կային պարագաներ, երբ հովիվն այնքան էր կապվում իր տիրոջ և նրա տան հետ, որ ամուսնանալուց, զավակների և հոտի տեր լինելուց հետո էլ չէր ուզում բաժանվել տնից և մնում, բաղմանում, ապրում, ծերանում ու մահանում էր նույն հարկի տակ։ Կային դեպքեր, երբ հովիվները անբաժան ապրել են տերերի հետ որդոց-որդի և սերունդից-սերունդ, տանց տիրոջ և ծառայի խրատության և տանց պարտապրաների։

Իսկ եթե մահացող հովվի որդիները կամ թոռները ցանկություն էին հայտնում բաժանվել տիրոջից, ստանում էին իրենց հոր կամ պապի ժառանգությունը և հեռանում տնից, ուրիշ գյուղ գնալու կամ նույն գյուղում իրենց օջախը կամ օջախները կազմելու համար, այս կարգի հովիվներին անվանում հուլիվ տնունն էին տալիս։

Վարձովի հուլիվ։ Այն գյուղացիները, որ առավելապես պարապում էին հողագործությամբ և իրենց տան կարիքները բավարարելու չափ անասուններ էին պահում, հավաքաբար վարձում էին նախրապաններ և չոպաններ։

Հովիվները վարձվում էին մարտի 15-ին և ապա արձակվում նախրամոզին, այսինքն՝ մսուրային շրջանն սկսելիս, յոթ ու կես ամիս տևողությամբ։ Այդ ժամանակամիջոցի համար ստանում էին՝ հինգ ոչխարի կամ այծի համար մեկ կոտ ցորեն, տասը ոչխարի կամ այծի համար մեկ զույգ արեխ (չարրխ), մեկ զույգ բրդե բուռ (զուլպա)։ Բան այծի և ոչխարի համար նախորդների վրա ավելանում էր կաշվից կարված մի շալիկ ու մի թումպան (վարտիք). հարյուր այծ կամ ոչխար ունեցող (իսկ ավելի քիչ ունեցողները հավասարաբար 100-ի համեմատությամբ) նախորդներին ավելացնում էր մի իշլիկ, մի շալվար, մի զույգ տոմա թոզլուխ, մի խեղերի (բրդից գործված արխալուխ). հավելյալ ծնի՝ հարյուր ոչխարից կամ այծից հարյուր դաս կամ ուլ ստանալուց հետո՝ մեկ զույգ դաս կամ երեք ուլ. ծնած ամեն յոթը դաղի կամ ուլի ուիներորդը տրվում էր հովվին. հերիակոն, բայց անասունների ղլխաքանակի համապատասխան ամեն օր չորս ժամ հաշ, այնպիսի ուսելիքներ, որ հովիվը կարողանար իր տավարձով տար տանել (կարագ, սեր, թթաթ, ժամիկ, [illegible] կամ տապկոց). նայած տրվելիք սեղդ որակին և բանակին։

Վերը նշված վարձման պայմանները չպետք էր խախտեն էլ. այսինքն՝ ոչխարաբաժին տրվելիք ավանդական վարձը։

Նախրապան (նախրչի) վարձելիս 3-րդ պայմաններ չէին օգտագործում, մնացյալ բոլոր պայմանները մնում էին նույնը, միայն թե հաշվական համեմատություններ գլխաքանակի վրա հինգ անգամ նվազում էր։ Մի կովը հավասար էր հինգ ոչխարի. եթե չոպանին տալիս էին հինգ ոչխարի դիմաց մի կոտ ցորեն, ապա նախրչուն՝ մի կովի դիմաց մի կոտ ցորեն, նույն համեմատությունները պահվում էին, բացի 3-րդից, բոլոր տրվելիքների նկատմամբ։

Ավելորդ է մանրամասներ եզնարածների (եզնարոտ), դառնարածների և հորթարածների վարձման ձևերի մասին, որովհետև տեսակն չէին և ժամանակավոր բնույթ էին կրում, կարճ ժամանակից հետո խառնվում էին հոտերին կամ նախիրներին։

Ժողովուրդը առհասարակ համակրական վերաբերմունք էր ցուցաբերում հովիվների նկատմամբ. բազարացու կողմից արհամարհված լեռնցի չոպանը գյուղացու ամենասիրելի բարեկամն էր։ Ոչ մի դժկամություն հովվի վարձի առթիվ, ընդհակառակը, արհամարհում էին ժլատներին և անիծում։

Չոպնի հախը (վարձ) ուտողի տահա պեթեր բլլիս։
Նախրչու առածին աչը անկողին աչը բռոնա։

Անասնապահները այնքան սրտանց կապված էին կենդանական աշխարհին, որ հաճախ անասունների անուններ էին տալիս մարդոց, որոնք դառնում էին տոհմանուն և օգտագործվում ազգակցության կողմից։ Ահա մի քանի նմուշ՝ Նախուշուց (Նախոչյան) Ավետ, Չոպնից (Չոպանյան) Գոգոր (Գրիգոր), Եզնարոտից Եզոսն (Եզնարոտյան)։ Տարին մի անգամ երեխա ծնող կնոջը կոչում էին Մարս (Մարի)՝ Մարոյից Արեգը, Պուղուն Լոռը Հարոն, Պուղից տան կովերը հինս են, Գոմեշ Մրկրան, Գոմշից Թորոն, Աղավնի (Աղվնուկաց Սեդոն, Աղվնուկյան), Այծիկ, Այծեմիկ, Այծեմիկաց Վազոն, Այծեմիկյան։ Այսպես՝ ծառ՝ Ծառուկ, Ծառուկանց, Ծառուկյան, պարտի՝ Պարտոնց Հարսը, Պարտիյան, պարտեղ՝ Պարտիղպանենց Սկոն, Պարտիղպանյան, քար՝ Չաքալ քարից Ալմասը, Չաքալբարյան, Քարյան, ծաղիկ՝ Ծաղիկ, Ծաղիկաց տուներ, Ծաղիկյան։

Կային հոտը բշելու, այծը կամ ոչխարը վանե-

լու, կանչելու հատուկ ձայնարկություններ՝ էհա, էհա-կանդ առ, կեցիր (վերաբերում էր ընդհանուր հոտին)։ Հրոռ-հրոռ—հոտը բշել, ճամփա հանել, դիշդ, դիշդ—այծերին վռնդել, սաստել, կլտի. կլտի, կլտի—այծերին կանչել։ Ոչխարը կանչելու ձայնարկությունը շրթների թրթռացումով էր տրվում և այն հնարավոր չէ դրությամբ արտահայտել։

Կանայք առհասարակ անուններով էին կոչում իրենց սիրած այծերին կամ ոչխարներին՝ Ծաղիկ, Քոլիկ, Լալա, Տեկող, Ֆիտան, Ֆնտրխ, Ճեյրան, Հեյրան, Խանում, Աստղիկ, Լուսիկ, Արեդ, Լուսան, Բունբուլ, Տըլե, Ղեշմեր, Շուշան, Պտպուտ, Ասլի. Մեխակ, Զումպյուլ, Օղիկ, Տողան։

Անշուշտ, հազարավոր այծերին ու ոչխարներին հնարավոր չէր անուններ տալ, բայց սիրված անասունները երբ իրենց անուններով կանչվում էին, մյուսներն էլ հետևում էին կանչվողներին։

Նույնը կարելի է ասել եղջերավոր անասունների, էշի, ջորու և ձիու մասին, ամեն մի անասուն ուներ իր անունը և հարյուրավոր անասունների միջից իր անունը լսող կենդանին դառնալով ձայնի կողմը, մայում, մկկում կամ բառաչում էր։ Կամ կամենալիս, վարելիս, երբ հո՜-հո՜ էին ձայնում, լծկանները արագացնում էին իրենց ընթացքը, իսկ երբ օհո՜ էին կանչում, կանգ էին առնում։ Նույնը և էշը՝ չու-չու ասելիս արագացնում էր քայլերը, իսկ չյուշ-չյուշ անելիս կանգ առնում։

Կաթնամքերք: Կաթնամշակությունը լեռնաշխարհի անասնապահության բնագավառում մնացել էր նախնական վիճակում՝ խնոցին կամ տիկն էին մածուն հարելու, յուղը զատելու և թանը հանելու միջոցը։

Հում կաթից յուղ էին հանում, հում կաթի ումանը (սերը) օգտագործում էին տկի պանիր պատրաստելու, իսկ հում կաթը ժամիկով խառնելու, որակը բարձրացնելու և ազնվացնելու համար։

Կաթ: Կթում էին հատուկ հողե սեռնիների մեջ, կային և նուրբ փայտից՝ բարակ տախտակից շինված կոլվակներ, որոնք նմանվում էին կալերի ժամանակ ցորենը չափելու կոտին, միայն թե կոտի տախտակներն ավելի ամուր, հաստ ու համաչափ էին, իսկ կոլվակները զանազան մեծության և ավելի նուրբ ու բարակ կառույց ունեին և նույն փայտից՝ բռնակ։

Կթը կատարվում էր օրը երկու անգամ, ոչխարը՝ իրիկունը և կեսօրվա պերին, իսկ կովերը՝ առավոտ և իրիկուն, որովհետև ոչխարն առտուն շատ կանուխ, իսկ եղջերավոր անասունները արևածագին արոտի էին գնում։

Կաթը քամում էին սուզակներով (թափանցիկ բարակ կտավ), որի բերանը լայն էր լինում՝ մակրբնոցի բերանը լրիվ ծածկելու չափ, և հետզհետե եռանկյունաձև վարը նեղանում ու սրածայր էր դառնում։ Սուզված (քամված) կաթը պղնձյա կաթսաներում, օջախի ոչ թեժ կրակի վրա եռացնում էին։ Ոչխարի կաթը եռացնում էին առանձին, որովհետև ավելի թանձր էր և պետք էր փայտե փոքր թիակով խառնել, որ տակը չառներ, իսկ կովի և այծի կաթը՝ առանձին կամ խառը, եթե քիչ էր։

Եռացած կաթը (եփված կաթ) լցնում էին հողե լայն ծափի մեջ և թողնում, որ մակարդվելու ասելիանին հասներ, այսինքն՝ ձկույթ մատ եթե դիմանար կաթի ջերմությանը, նշանակում էր, թե կաթը մակարդվելու ժամանակն էր։ Մակարդը նախ լուծում էին կաթով՝ ծափի պռունկի մոտից մատի հաստությամբ չորս տեղից սերը ծակում և չորս կողմից լուծված մակարդը լցնում ու փայտե գգալի կոթի բարակ կողմով կաթին թեթև հորձանքներ էին տալիս, որպեսզի մակարդը հավասարապես խառնվեր կաթին, առանց ծափի վրայի սերը խանգարելու, որը մնալու էր լրիվ։ Մակարդված կաթի հողե ամանը նախապես փաթաթում էին բրդյա կտորով և դնում հարդի (էրդ) վրա, իսկ բերանը չէին ծածկում, որ շոգին չվնասեր սերին և մածունը անուշ լիներ։ Մակարդի ծափը դոցում էին մակարդի գբոցով, որը հյուսում էին հատուկ ձևով՝ բերանը լայն, տակը՝ կլոր և ասփակ, բայց բերանից կիսով չափ փոքր։ Մակարդի գբոցների դերը՝ նախ օդ տալ մակարդվող կաթին և օդնել, որ սերը զովության մեջ ամրանար ու հաստանար, ապա՝ մակարդը զերծ պահել միջատներից, սողուններից, փոշուց և կատվի ոտնձգություններից։ Գյուղում կաթը մակարդելու հատուկ սենյակ կար, որը նույնպես կոչվում էր մակրբնոց։

Այսպիսով, կաթը մշակման առաջին գործողությանը ենթարկվելով, դառնում էր մածուն։

Մածուն: Ինչպես պարզվեց, կաթը մինչև մածուն դառնալը մնաց որպես ատաղձ, քանի որ լեռնաշխարհում հում կամ եռացրած կաթից յուղ չէին հանում։ Մակարդը բռնելուց երեք ժամ հետո մածունը պատրաստ էր լինում, բայց թարմ վիճակում մածունին գդալ չէին դարնում, որպեսզի սինուկ չկտրեր։ Այսօրվա մակարդված մածունը կարում էին վաղը, որը հնարավորություն էր տալիս, որ մածունը ամրանար և մածնասերը հաստանար։

Հաջորդ օրը լույսը դեռ չբացված, հավաքում էին մակարդների վրայի հասած և միակտուր սերը և փռում լավաշ հացի վրա, այն համեմատու-

թյամբ, որ բավարարեր փայտվարի և ցրուիվարի նախանձը։ Սերը առաջնորդում էր ծանր աշխատանք կատարողներին և տան երեխաներին։ Սակարդի սերը չէին չորացնում, այլ օգտագործում էին թարմ վիճակում որպես նախաճաշ, իսկ ավելացածը խառնում էին պանրին կամ լցնում հարվելիք մածնի վրա։ Առավոտուն տան անդամներին բավարարելու չափ ոչխարի մածուն գտնելուց հետո մնացյալ մածունը խնոցիներով հարում էին։

Հայերն առհասարակ մածունը հարում էին կավից պատրաստված, լավ թրծված, անուշահոտ յուղով օծված խնոցիներով, իսկ բրգերը՝ տակերով։

Խնոցի հարելը տան երիտասարդ աղջիկների և հարսների գործն էր, իսկ թանը բամելու կ՝ յուղը հանելու վրա հսկում էին ավելի փորձառու և տարեց կանայք։ Խնոցի հարելը սկսվում էր արևածագից առաջ, որպեսզի օրը զեռ չտարացած գոլության մեջ բամեին յուղը, որն ավելի արդյունավետ էր լինում։ Հարելիս խնոցու մեջ պարբերաբար լցնում էին ստոր ջուր, նախապատվություն տալով ս. Կարապետի-աղբրա, Լիս-աղբրա ջրերին, այն համարելով, թե դրանց սրբերը օգնում են կարագի ավելանալուն։ Հարելը (հարել) լրանալուց հետո սուղակով բամում էին, կարագը մնում էր սուղակի մեջ, թանը լցվում էր ծափերը, սուղակում եղած կարագը սեղմելուց, մի բանի անգամ ուսոր ջրի մեջ դնել-հարելուց հետո, երբ համոզվում էին, թե կարագը այլևս թան չի պարունակում, գնում էին այն ստոր ջրի մեջ, որ պնդանար։

Քամված թանից ուտելու, խմելու, կերակուրներ, թանապուր պատրաստելու համար բավարար չափով դատելուց հետո մնացյալը նույն օրը եռացնում (կտրում) և ժաժիկ (չեռելիկ) էին պատրաստում։ Թանից դուրս եկած ժաժիկը քիչ աղելուց հետո նույն օրը լցնում էին հատուկ տոպրակի մեջ, որը դնանվում էր լինում գետնից 60 սմ բարձրությամբ մեծ սայրարի վրա և վրան ծանր սայրար էին գնում, որ մնացած ջուրը բամվեր։ Այդպես մնում էր մինչև հաջորդ օրը, երբ պատրաստում էին ժաժիկը, իսկ կտրված թանից դուրս եկած սիրուկը այծերին էին տալիս։ Այծերը պերատեղից վազում էին տուն՝ դուրս լցված սիրուկը խմելու։

Լավ բամված և պնդացած ժաժիկը տոպրակից հանում և լցնում էին տակի մեջ, վրան ավելացնելով հում կաթի երեսից հավաքած սերը և ճմլում էին, իրար խառնում (կերցնել)։ Քրում մինչև որ ժաժիկն ու սերը լուծվեին իրար։

Սալթարի վրա դրված տակերի հետ նույն գործողությունները շարունակվում էին, մինչև որ տակերը լցվեին, որից հետո լավ թամված, ծանր քարի տակ լավ հնշված և ամրացած թորաիր լցնում էին հյուսիսի մեջ և թաղում հողում։

Այս ձևի պանրին ճորված պանիր և կամ հյուսի պանիր էին ասում։ Նույնը պատրաստում էին նաև փոքր տակերի մեջ։ Քրդերը տակի պանիր, իսկ հայերը ճորված պանիր էին օգտագործում։

Սա ամենօրյա օգտագործման պանիրն էր։ Կար և ժաժիկախառն պանիր։

Ոչխարի հում կաթը մի քիչ տաքացնում, ապա մեծ տաշտերի մեջ էին լցնում, տաք պատրաստված պանրամակարդով (մայա) մերում և ստանում էին բոլորին ծանոթ պանիրը, սակայն դա մեծ կտորների չէին վերածում, ընդհակառակը, սինուկից սուզելուց և ճնշման միջոցով մի լավ թամելուց հետո, քիչ աղում, ապա մանրացնում էին և խառնելով թանից հանված ժաժիկի հետ, վրան ավելացնում էին սեր և կաթ, բոլորը մեկ մի լավ թրում, իրար մեջ լուծում և ձգում, որ մի օր հանգստանար, ապա լցնում տակերի մեջ ու դնում կրկին հնշման տակ։

Դերսիմի լեռնային շրջաններում մեծ կտորներով աղջուր դրված պանիր չէին օգտագործում, առհասարակ տնային օգտագործման պանիրը կամ բյուսի և կամ տակի պանիրն էր լինում։

Պատրաստում էին նաև առանց ժաժիկի խառնուրդի պանիր, որին խաս պանիր էին ասում և որն առավելապես հյուրերի, տոնական օրերի, պատվո սեղանների համար էին օգտագործում։

Խաս պանրի պատրաստության և պահպանման ձևը միևնույնն էր, միայն պանրի մանրուքին ժաժիկ չէին խառնում, այլ պատրաստում էին պանրի, բամված մածունի և սերի խառնուրդից, որը կարագի նման կարելի էր հացին քսել։ Այդպես պատրաստված պանիրը միշտ կակուղ էր մնում և ավելի ախորժահամ էր։

Հայերի մի մասը օգտագործում էր նաև թել պանիր, որին նիվիլ պանիր էին ասում։

Սարի կաթնամշակումը սրանով էլ վերջանում էր։ Պատրաստված մթերքը ամեն շաբաթ ուղարկվում էր գրեթե, որ ենթարկվում էր դասավորման և վերջին մշակման։

Ինչպես կայր վերջանալուն պես տեղագին կերպով պատրաստվում էին տարեկան բնաղունի պատրաստման [illegible] սարից տնամերձ կամ արտագյուղային գոմերն ու ապրելները փոխադրե-

[1] Անատոլիոյ փայտ կրելը (փայտվոր), արա ջրելը (ջրաուրվոր) ծանր աշխատանք [illegible] և բա այնմ ներգրվում էին նման աշխատանք կատարողներ։

10—61









Նկ. 11. Կաթնամշակման պարագաներ. 1. կոյվակ, 2. սերնիկ, 3. խնոցի, 4. սիկ-խնոցի, 5. խնոցու ճոճը։

վելուց հետո, սկսում էին ձմեռվա աղարթի պատրաստություններ։

Նախ բնադունն իր մեջ խտացնում էր հացահատիկից ստացված հացը, բնդեղենը, ապուրցուն, պուլղուրը և այլն, աղարթուն (կաթնեղեն) էլ նշանակում էր կաթնամշակումից ստացված բոլոր առնտուրները։

Գյուղացին երկու բառի՝ բնադունի և աղարթուի մեջ խտացրել էր իր օջախի հարստությունն և առհասարակ պահպանման կենսամիջոցները։ Աղարթուի վերջնական պատրաստության ժամանակը արտոյլուպային գոմերի շրջանն էր, ուր տեղավորվելուց հետո պատրաստում էին չոր սեր, չոր թան, բաժած մածուն, բազկրիան, ձմռան թարմ կարագ։

Տնամերձ գոմային շրջանը կարելի էր կոչել խապի շրջան։ Կաթը նվազում էր, բայց էլ ավելի թանձրանում և յուղալի էր դառնում։ Որևէ տնտեսություն իր ձմեռվա աղարթուն պատրաստելու համար իր առօրյա կաթով չէր բավարարվում, իր կաթը որոշ չափամանով մի քանի օր փոխ էր տալիս մեկ կամ մեկից ավելի տնտեսության, ապա հերթով նա ստանում, որն էլ հենց խապն էր։

Խապի հաշվարկումն կես մետրանոց, մատի հաստությամբ չոր մի փայտ էր, որը մեջտեղից և վերից-վար երկու հավասար մասերի էր բաժանված։ Մասերից մեկը մնում էր ստացողի, մյուսը՝ տվողի մոտ։ Փոխատուն կաթը տանելու ժամանակ իր հետ վերցնում էր փայտի կեսը, կաթը չափում և հանձնում էր, ապա երկու կեսերը միացնում և դանակով նշում այնքան չափ, որքան որ տվել էր։ Արունակտարաբ նա ստանալու ժամանակ, նույն մեթոդիկեները, տրված չափի համեմատությամբ, դանակով տաշում և ջնջում էին։ Խապի փայտը իր խաղերով հաշվառման ամենաապահով ձևն է, որն իր պոյությունն և անոխությունությունը իրավունքը ձեռք էր բերել հայգարամյակների փորձառությամբ։

Ջուր սեր։ Խապի առաջին օրերի արտադրանքը չոր սերն էր, ամեն մի ոչխարից պուտ-պուտ, կաթիլ-կաթիլ կթված կաթը ինքնին յուղ էր, խապի օգնությամբ բանակը բազմապատկում և, ըստ իրենց օգտագործման չափի, սեր էին հանում։ Սերի պատրաստման համար պղնձե հատուկ ամաններ կային (սինի), մինչև 50 սմ տրամագծով և հինգ սմ խորությամբ այդ ամանների մեջ լցնում էին հում կաթը և դնելով օջախի ոչ ուժեղ կրակի վրա, կաթը թե տաքանում և թե շոգիանում էր, և որովհետև կրակը մեղմ էր, ամանի տակը չէր առնում (չէր այրվում)։ Այսպես, կամաց-կամաց նոացող կաթը թանձրանում, դուլեր փոխում, կեղևում էր և վրան թանձր սեր էր կապում։ Երբ առաջին թերթիկ սերը պատրաստ էր, կեղևը ճարրված բարակ մոլ մի փայտ ամանի մեկ կողմից մյուսը սերի տակից անցկացնում և ուշադիր հացի մեծությամբ ու կլորությամբ միակտուր սերը վերցրնում, կախում էին հատուկ տեղ։ Սերն այնքան թանձրացած և կարծրացած էր լինում, որ փայտե ձողիկի վրայից չէր թափվում, մնում էր լրիվ։ Նույն ձևով նույն կաթից, առանց նոր կաթ ավելացնելու, երեք անգամ սերի թերթիկները առնում էին, նոր միայն կաթը փոխում։ Այս կերպ սերաթերթիկները ստվերում չորացնում էին։ Չոր սերը ձողիկներից հանելուց հետո մի մասը սակառներում պահում էին լրիվ վիճակում։ Սակառի տակը չոր տերևներ էին դնում, սերը մեջը շարում, վրան սուղակով փակում և աղարթուաան առաստաղից կախում էին։ Մեծ մասը կտորների էին վերածում, առուշ ձյութով պատված բղիկներում շարում, մինչև պոկեները (շրթունք) լցնում և վրան թորված մեղր դնում, մինչև որ սերը մեղրով ծածկվեր, ապա բղիկի բերանը սեկով փակում և պահում էին։

Զորբան։ Ոչխարի խտացած մածունին թե հայերը, թե բրդերը զորբան էին ասում։ Հայերը չորթաներ օգտագործում էին ձմռան յուղալի թան ստանալու, թանապուր, սոուն, բալամաշ (քալաորոշ) և դանագան այլ ճաշեր պատրաստելու համար, ուստի շատ էին անում դրանից։ Քրդերը, բացի վերը հիշված ճաշերից, չորթաներ առավելապես օգտագործում էին որպես պատերազմական ոնեղապահեստ։ Չորթաներ դիմանում էր երկար ժամանակ և բուրդ կովողը օրական երեք չորթանով և երեք կորեկի հացով բավարարվում էր մարտերի ժամանակ։ Թիկունքից սնեղամթերք չէր սպասում, մի տավարաղ լեցուն կորեկ հաց և չորթան բավական էր, որ 15 օր դուրս չգար կռվի առաջին գծից։ Այդ էր պատճառը, որ Դերսիմի բրդերը մեծ կարևորություն էին տալիս կորեկին և չորթանին։

Չորթաներ պատրաստում էին ոչխարի մածնից։ մակարդված մածնի վրայի սերը չէին առնում, այլ լցնում էին սուղակների մեջ, սիմուկը հանում, մածունը բամում և ձվաձև կամ կլոր դեղիկների վերածելուց հետո արևի տակ չորացնում։

Քարայրների գինապահեստներում մթերում էին մի տարի բավելու չափ չորթան, որն ամեն տարի փոխում էին նորով։

Քամված մածուն։ Գյուղացին սիրում էր ոչխարի մածունը և տարին բոլոր հանույթով գործածում այն, ծնից մինչև աշուն՝ թարմ վիճակում, հոկտեմբերից-մարտ՝ բամված վիճակում։

Մակարդված մածունը սերի հետ լցնում էին մածնաքյուփը, որին բղող էլ էին ասում և մի լավ խառնում, ապա կտավի տոպրակի մեջ լցված ալյուրի թեփը դնում վրան։ Ամեն անգամ, երբ թեփը թրջվում էր, նոր թեփով փոխում էին այն, մինչև որ ալրաթեփը այլևս չթացանար։ Մինչև բղողի լցվելը նույն գործողությունը շարունակում էին, այնպես որ մածունը ոչ միայն քամվում, այլև ամրապնդվում էր։ Բղողը քամված մածնով լցնելուց հետո երեսը սեկով ծածկում, ապա սեկի վրայից մի մատ հաստությամբ հալված ճրագու էին լցնում և այդպիսով զմռսում։

Քամված մածունից ամենահամեղ թարմ մածուն էին պատրաստում, երբ դրա կարիքն զգացվում էր։ Քամված մածունը ջրով լուծում և այն աստիճանի էին հասցնում, որ թվում էր, թե մակարդից նոր կտրված թարմ մածուն է։

Բազկրթան։ Եթե ոչխարի մածուն չկար, սա պատրաստում էին կովի մածնից։ Մեծված, թեփը հանված ու աղացված կորկոտը քիչ եփված վիճակում սառեցնելուց հետո խառնում էին մածնին և լավաշ հացի գնդիկների նման գնդում ու արևի տակ չորացնում։ Չորացված բազկրթանը կիսապատրաստ ճաշ էր, որով եփում էին թանխաշը և թանապուրը։

Մեղրով կարագ։ Աղարթուի վերջին պահածոն թարմ կարագն էր, որը ստանում էին միմիայն կովի կաթից մակարդված մածունից։ Կարագը լավ լվանալուց, թանը հանելուց հետո այն գցում էին սառը ջրի մեջ, որ մի քանի ժամ լավ սառչեր, ապա վերածում էին ձվաձև փոքրիկ կտորների և դարսում կճուճների մեջ, վրան լցնում քամված մեղր, մինչև որ բղուղի պոկներին հասներ, ապա սեկով բերանը կապում և պահում էին։ Մեղրի մեջ կարագը մնում էր միշտ թարմ, որն օգտագործում էին թե տնեցիներին և թե հյուրերին հրամցնելու համար։

Լեռնաշխարհում ասացվածքի կարգ էր անցել՝ կեր օշխրի մածունն ու տիկի պանիրը, կովու մեղրով կարագը, իմիր սև օշխրի կամ իծու կաթը։

Անասունների հիվանդություններ։ Ինչպես մարդկանց, նույնպես և անասունների հիվանդությունները բնակլիմայական բարենպաստ պայմանների հետևանքով, շատ չէին տարածված։ Եղածները հետևյալներն էին՝ տապախ (կճղակախտ), չոռ (խոշոր եղջերավոր անասունների համաճարակ), քեփենեկ (այծերի և ոչխարների թոքատապ), մրքզավու, քոս, պալարներ և վերքեր։

Համեմատած դաշտային և նախալեռնային շրջանների հետ, կճղակախտը այստեղ շատ սահմանափակ էր, բայց վարակիչ հիվանդություն էր։ Հայտնվում էր խոշոր եղջերավոր անասունների, առավելապես լծկան եղների կճղակներում։ Հետևանք էր չորության. կճղակների արանքը միշտ չոր հողին (հերկ, վարուցան) շփվելուց էր առաջանում։ Երբ տապախը հայտնվում էր անասունների մեջ, անմիջապես մեկուսացնում էին վարակվածին, որ շփում չունենար մյուսների հետ։ Տապախը հայտնված գյուղի հետ խզում էին հարաբերությունները, որպեսզի հիվանդությունը չտարածվեր գյուղից-գյուղ։ Վարակվածներին տանում էին ենուաները (բացատ), ուր խոտը առատ, միշտ կանաչ ու թաց էր լինում, ապա շիրով այրում կամ շիկացած շամփուրով զազում էին այն մազաբշտիկները, որ հայտնվել էին կճղակների արանքում։

Բացի արոտից, հիվանդ անասուններին տալիս էին աղացված դարու և ֆիկի թթվածր և խմեցնում խաշած դդտորի ջրով խառը սիճուկ կամ թան, թույլ չէին տալիս խմելու լճացած կամ անմաքուր ջուր։ Եվ որովհետև տապախը ամառային հիվանդություն էր, վարակվածները ԼԵԹ բոլորովին «օտից ինկած» չէին լինում, պահում էին բացօթյա թավուտներում ու թույլ չէին տալիս, որ գիշերեին ախոռներում։

Ամեն օր երեկոյան, երբ անասունները հանդստանում էին, կճղակների արանքին քսում էին կաղնի փայտի մոխրաջրով լուծված կավ (դլուխ լվանալու հանքային կավ), որի մեջ շաղում էին կապույտ քարի (կյոդթաշի) և թրախոտի տերևներից մանրացված փոշի և այդպիսով կազմված կավախմորը քսում անասունների դաղված մասերին։ Այդ ձևի դարմանումը շարունակում էին հինգից-յոթ օր։

Չոռ։ Աստվածային պատուհաս համարվող վտանգավոր այս հիվանդությունը, որը խոշոր եղջերավոր անասուններին էր հատուկ, հայտնվում էր ամռանը, բարեբախտաբար շատ հազվադեպ։ 1890 թվականի չոռից հետո մինչև հայրենիքից հեռանալս՝ 1915 թվականը, 25 տարի, այդ հիվանդությունը չէր հայտնվել։ Շատերը լսել էին չոռի մասին, բայց չէին տեսել։ Այնքան աղետաբեր էր, որ ժողովրդական անեծքի կարգն էր անցել ու ծառայում էր որպես վերհիշումի թվական։ «Չոռոր տանի», «չոռի տարին», «երկու տարեկան էիր, երբ չոռը եկավ» և նման խոսքերը հենց վկայում էին այս հիվանդության աղետալի բնույթը։

Չոռի ախտորոշումը դժվար չէր։ Վարակված անասունի ականջները կախվում էին, աչքերից արտասուք, քթից ու բերնից լորձունք էր վազում,

դագարում էր վարակելուց և հաճախ գառնում ինքն իր շուրջն ու ընկնում, այլևս ոտքի չկանգնելու պայմանով։ Այդ աղետալի վերադրում էին աստծու 1 որբերի պատուհասին, հետևաբար դարմանումն ապատում էին պատուհասողներից։ Վարակված անասունները դեռ նույն օրը մեկուսացնում էին ոչ թե տխառներում, այլ սրբազան անտառներում (ինձորեկցիք՝ Մոսկրուտի, Դերսիմում՝ Գարտիի) և դալար չրերի, մաքուր օդի և ծով կանաչության մեջ պահում այնքան ժամանակ, մինչև որ վարակվածն առողջանար կամ սատկեր։

Վարակվածներին խմեցնում էին դդմորի (փալտա) խաշված ջրով խառը ծծումբ և կերակրում խյուսերով (լատիա), որոնք պատրաստում էին դարու, ֆիկի թեփոխան այլուրից, եռացնելով այն հաչաղբյուրի, էիոպրյուրի ջրով։

Հիվանդ անասունների մեկուսացման բացատներում գիշերները վառում էին խարույկներ, որպեսզի չարքերը չոպավեին տոհիից և հիվանդությունը սահմանափակվեր խարույկների շրջանակում։ Մյուս կողմից ծառերից կախում էին հնացած խոփեր, կոտրված պայտեր, շամփուրներ և այլ նուսխաներ։

Սրբատեղիներից բերված որհնված ջուրը ցայտում էին վարակվածների վրա։ Հիվանդությունը երկար չէր տևում, առողջանում կամ սատկում էին երեքից-հինգ օրվա ընթացքում։ Սատկածների դին եռացնում և առանց մորթատեղ տանելու այրում էին, իսկ առողջության նշան ցույց ավողներին առանձնացնում էին անասուն, առանց դյուղ տանելու։

Հիվանդությունից բուժված էին նկատում այն ժամանակ, երբ սիտի նշաններն անհետանում էին և անասունը սկսում էր կանաչ խոտ հարակել, որովհետև մինչ այդ հիվանդների ստամոքսը անդոր էին խոտ ուտելու։

Զոհից ապատված կենդանին այլևս չէր վարակվում ուրիշ հիվանդությամբ, որը կոչում էին «չոսիկ խալրատ»։

Քեփենեկ։ Ոչխարներին և այծերին հատուկ այս հիվանդությունը թոքաբորբ էր, որը հայտնաբերվում էր անասունների տեսական հայից և նիհարությունից։ Քեփենեկով վարակվածները միշտ ետ էին մնում հոտից և փոխանակ արածելու, պառկում էին ուր պատահեր։ Այս հիվանդությունը թեև սահմանափակ էր և դրեթե անվտանգ, բայց և այնպես հայտնաբերվելիս հիվանդին առանձնացնում էին հոտից և առնում հատուկ խնամքի տակ։

Առաջին հերթին խմեցնում էին սինուկ (հարված մածնախառնի կտրելուց հետո բռնված ջուր)։ Սինուկի մեջ լուծում էին երեքից-հինգ ձու և խառնում գարու այլուր, տալիս հիվանդներին առավոտ շատ կանուխ։

Քեփենեկով վարակվածներին առանձնացնում էին լեռնային քարայրներում և տասն օր թույլ չէին տալիս կանաչ խոտ ուտելու, կերակրում էին խաշված և մի լավ խյուսի վերածված հատիկային կերով։ Առավելապես տալիս էին քիլուտի այլուրից պատրաստված մալեդ, որին խառնում էին բովված և տաղցված գդմորի այլուր, մեղր և յուղ։ Այս ձևի բուժման երրորդ օրը կենդանիները աշխուժանում էին և հաղը մեղմանում էր ամենաուշը 15 օրվա ընթացքում, թոքերի խոցերը փակվում և անասունները ավելի դիրացած ու կայտառ, վերադառնում էին հոտ։

Քեփենեկով վարակված և բուժված այծը երբ ոտքին էին, թոքերի վրա նկատվում էին բուժված խոցերի սպիները։

Մրմղաու կամ մրմղավու։ Գիներին, ջորիներին և էշերին հատուկ հիվանդություն էր։ Երբ ձին կամ ջորին ականջները կախ, պառկած տեղից դժվար էր ոտքի կանգնում և ախորժակով կեր չէր ուտում ու երբ նկատում էին, որ դժվար է շնչում և բթի ծակերից նոսր լորձանման շղթիր է հոսում, առանց երկմտելու համոզվում էին, որ կենդանին հիվանդ է։

Այս հիվանդությունը, անմիջական դարմանումի պարագային, հաղիվ մի կամ երկու օր էր տևում, իսկ չդարմանվելու և հիվանդությունը երկար ձգելու դեպքում փոխվում էր ուղեղատապի և անասունը սատկում էր։

Հիվանդության հայտնաբերման առաջին օրն իսկ դարին մի լավ խաշում և տաք-տաք լցնում էին մաղից խիտ հյուսված տոպրակի մեջ և անասունի բերանը խրելով շողիախառն դարու պարկի մեջ, կապում էին ղլխին ու մի լաթով ծածկում ղլուխը, պարանոցը և տոպրակը։ Երեք ժամ հետո, երբ տոպրակը հանում էին, խաշված դարու վրա դոնում էին անասունի բթածակերից դուրս եկած մեծ քանակությամբ թանձր խլինք, որը դեռ շարունակում էր հոսել թարախանման ոչ լույծ շերտերով։

Կերակրելու համար տալիս էին խաշված կանկառ, որին խառնում էին քիչ քանակությամբ բթախոտ, որից անասունը ուտելու ժամանակ կամ վերջը փոշտացնում և ղլխի կամ թոքերի դանդան մասերում լերդացած պալարը արտահանում էր։

Առաջին օրը անասունի մեջքին կապում էին

չով, տակը փռում խուշկի և տալիս զորավոր կեր, երկրորդ օրը կենդանին բուժված էր լինում։

Քոս։ Առավելապես այծերին հատուկ հիվանդություն էր և ուներ վարակիչ բնույթ, թեև մահացու չէր, բայց մարմնի այն մասը, ուր քոսի բշտիկն էր հայտնվում, արյունելու աստիճան քորվում էր։

Մարդիկ այծերից էին վարակվում։ «Քոսոտ այծի պես fերվի կը» ասույթը քոսը այծից ստացած լինելու ակնարկությունն էր։ Քոսը դարմանում էին ծծմբից և ղղտորի ալյուրից պատրաստված սպեղանիով։

Դերսիմում ծծմբային ջրեր շատ կային, քոսոտած մարդուն կամ կենդանուն լողացնում էին ծծմբային ջրավազաններում, ապա պառկեցնում կամ մարմնի քոսոտած մասերին քսում նույն ավազանի հատակից հանված տիղմը։ Ասում էին, թե որսորդները հաճախ նկատել են, թե ինչպես վայրի քարայծերը մտել են ծծմբային ջրերը և պառկել տիղմերում, ապա կրկին լվացվել ու հեռացել։ Հետաքրքրությունից մղված մի որսորդ հետապնդել է քարայծերին և հետևել նրանց շարժումներին ու նկատել, որ բոլոր քարայծերը չէ, որ լողանում են ծծմբաջրային ավազաններում, այլ խմբից անջատված մեկ կամ երկուսը, ու երբ թաքնված ծծմբաջրերի մոտերքում սպասել և խփել է քարայծին, նկատել է, որ դեռ նոր թափված կոշկոռների տեղը քոսի վերքեր են եղել։

Թոշնապահություն։ Թռչնապահությունն այստեղ՝ լեռնային մասերում, շատ թույլ էր զարգացած։ Չնայած առատ ջրին և բուսականությանը, հազիվ թե տեղ-տեղ դաղափար ունեին բադի ու սագի մասին։ Մինչդեռ Արածանիի և Եփրատի հովիտները, հարակից Դերջանի, Քղիի, Բալուի, Ջարսանջակի որոշ գյուղեր, առավելապես Երզընկայի Սազ գյուղը հարուստ էր այս թռչուններով։

Քղիում նույնիսկ Սագաձոր անունով գյուղ կար, ուր աճում և բազմանում էին փետրավորների համացեղակիցները։

Լեռնային մասերում առավելապես շատ էին զբաղվում հավաբուծությամբ և աղավնաբուծությամբ։ Հավը պահում էին հատկապես ձվի և մսի համար, աղավնին՝ մատաղի։

Գոմերին ու ախոռներին կից, աղատներով անջատված, լուսավոր և ընդարձակ հավաբներ կային շինված, որոնց մուտքի և ելքի ծակերը մեկուսացված էին ախոռներից ու գոմերից, որպեսզի հավերը մսուրային շրջանում չմտնեին կենդանիների մսուրներն ու չխանգարեին նրանց հանգիստը, մյուս կողմից հավի ծիրտը վնասակար է անասունների առողջությանը։ Հավանոցներում բարձրից ամրացված թառերի կողքին կախված էին բնկլնոցները, իրենց բունկալներով, որոնք գետնից մարդահասակ բարձրություն ունեն։ Բնկլնոցները պիքից կամ փիճուռուց պատրաստված հատուկ այդ նպատակին ծառայելու քթոցներ էին, որոնց հատակը հարդով լցված, վրան էլ բունկալի հավկիթ էր դրված լինում։

Աղավնիների բներն էլ հավանոցում էին գտնվում, բայց ավելի բարձր, քան թառերը՝ զբաղեցվում էին նույն հարկի տակ, իսկ ել ու մուտի համար օգտագործվում էր տանիքի օդանցքը։ Աղավնիներին չէին մորթում, պահում էին սրբերին որպես մատաղացու, արյունը հանում էին աջ ոտքի փոքր մատից և տասնյակներով բաց թողնում սրբատեղիում։ Հավն ու աղավնին կերակրվում էին միասին, թեև աղավնիները առավելապես դաշտերում էին սնվում ու երբեմն էլ միախառնվելով վայրի աղավնիների խմբերին, ետ չէին վերադառնում կամ ընդհակառակը, վայրի աղավնիներ էին տուն բերում և ընտելացնում։

Աղավնին սուրբ էր, հավատում էին, թե երիտասարդ մեռնող մարդոց հոգին աղավնու է կերպարանափոխվում և թռածում հորիզոնում։ Եթե պատահեր, որ աղավնիներից մեկն ու մեկը թոնրատան երդիկից տան ներսի կողմը նայեր և կամ տուն մտներ, անմիջապես աղքատներին ողորմություն էին տալիս, այն հավատով, թե ներս մտնող աղավնին իրենց վաղամեռ զավակն է ու այցի է եկել իր հարազատներին։

Այս շրջանի հավերի մեծամասնությունը թրոչող հավեր էին, մինչև մեկ կիլոմետր տարածություն թռածող հավեր շատ կային, որոնք դուրս գալով բներից, բարձրանում էին տանիքը և թռչում դեպի արտերը կամ մարգերը, երեկոյան նույն ձևով ետ վերադառնում։ Պատահում էր, որ թռչող հավերից ոմանք օրերով կորչում էին, տուն չէին վերադառնում, կարծել տալով, թե զոհ են գնացել աղվեսներին, սկյուռներին կամ արծիվներին, սակայն մի օր էլ հայտնվում էին ճտերով։ Նման պարադային հավը բույն էր դնում անտառի մացառներում, ձու ածում, ճտեր հանում և մինչ այդ եթե զոհ չէր դառնում որևէ գիշատչի, ապա վերադառնում էր տուն։

Շատերն արգելելու համար հավերի թռիչքը, կտրում էին աջ թևի փետուրները։ Թռչող հավերի սարսափից, տնամերձ և մերձդյուղյա արտերում դարի չէին ցանում, հավերը թշնամի են գարու արտերին։

Ադավնիներին և հավերին կերակրում էին կորեկով և հավկուտով՝ բնական պատրաստելիս մաղված ցորենի աղացուն հատիկներով, որոնք թափվում էին մաղի խիտ ծակերից և չէին ոչտագործվում այլուր պատրաստելիս, որով հետև փոքր և նվազ էին։

Դարնանը հավերի ձվատվությունը ավելացնելու համար դարին խաչում էին, վրան մոս պղպեղ ավելացնում և հավերին կերակրում դրանով։ Փորձով հաստատված էր, որ պղպեղախառն խաշված դարիով կերակրված հավերը հինգ որ իրար վրա ածում, մի որ հանգստանում էին։

Հավերի և կարավների աչ թևերի կենտրոնական մասի՝ թևերն իրար միացնող մազոդաձև փոքր նուրբ սկարը, որ զոպանակի դեր է կատարում, պահում էին երկյուղածությամբ։ Այն բախտավորության մասունք էր համարվում և երեխաների վզից, կենդանիների պարանոցից էին կախում, որ բախտավոր լինեն։ Դա նաև սեկերի մեջ էին կարում, նուսխա պատրաստում և կախում կամ կարում իշլիկի աչ թևի տակ, որը, բացի բախտավորությունից, ուժի և բարության ներշնչարար և հզորության սուրբն էր։

Հավերին հիվանդությունից դերծ պահելու համար հավանոցի ներսում, մուտքի մոտ թաղված հատա կավե կոնքի մեջ ածում էին կաղնի փայտի մաղված մոխիր, վրան լցնում կաղնի ծառի պտուղի (փալուտ) խաշվածքի ջուրը, որը բավական լեղի էր լինում։ Ջրի մեջ լուծում էին մի կտոր ծծումբ (բյուկուրթ), ածում մի բանի պնդեղ սխտոր, մի կտոր երկաթ, նախապատավություն էին տալիս խաչերկաթի (խաչերկաթ) կտորին, կոտրված խոփի և կամ այրված երկաթի որևէ կտորի։

Հավերի մուտքի դռնակը ներսից փակվում էր, այդ պարտականությունը կատարում էր մամը կամ իր հաջորդ մեծ հարսը, որն ամեն իրիկուն անձամբ ուսուցում էր և իր ձեռքով փակում անցքը, որ դիշատիչները ներս չսողոսկեն։

Առավոտյան հավերը կուտ ուտելուց հետո ծարավը հագեցնում էին կոնքում դտնված դեղաջրից, որի դառնությանը և համին վարժված էին։

Հավարունը մարքում էին տան չափահաս ապրիկները կամ հարսները և ծիտոր թափում տնաշեն հողամասի որոշված տեղում։ Ադավնիների և հավերի ծիտոր, նույնպես և թռչունների և օջախի մոխիրը գոմաղբին չէին խառնում, ամեն մի աղբ առանձին իր տեղն ուներ և գործածության նպատակը։

Հավանոցի ձուն հավարելու իրավունքը տան եղբեց հարսին էր վերապահվում, նա ոչ ոքի չէր հայտնում օրվա հավաքած ձվի քանակը, հավանոցից ստուն փոխագրելիս խնամքով ծածկում էր հավկիթով (ճայվիր) լեցված սակառը։

Հավերն էլ էին ճանաչում իրենց խնամողների կուտ տվողների ոչ միայն գեմքերը, այլև ձայները։ Հու, Հու, Հու՝ կանչին խելապատառ պատասխանում և կանչողի շուրջն էին հավաքվում։ Քրշ, քրշ, քրշ՝ ձայներ լսող հավերը հեռանում և փախուստ էին տալիս գանազան ուղղությամբ։ Հուն, բուն, բուն՝ կամ՝ հրին, հրին, հրին՝ կանչին պատասխանում էին առանց դժվարության և մրտնում իրենց սահմանված անցքերից ներս։ Այսպես գյուղացի տատիկը խոսում, հասկացնում և հասկանում էր իր մեծացրած հաների լեզուն։

«Ադչի նազո, հավերը ընդնում են», «հավը կակաում է, կոկում է» ասող մամը գիտեր, թե ինչ է կատարվում հավի հետ։ Ձու ածող հավը զարգենում է, կուտ փնտրողը փոտում է, ջուր խմելու ժամանակ գլուխը դեղի երկինք բարձրացնող հավը փառ է տալիս ստեղծողին, թխսկան հավը զորդորում է, թուխս, թխսկան, գուրթ, գոթիկան էին կոչում թուխս եկող հավերին։

Հավերի ցեղն աղնվացնելու, ձվատվությունն ավելացնելու համար թխսի տակ դրվելիք ձվերը ստանում էին այն հավերից, որոնք ծանր կչռոն ունեին և շատ ձու էին ածում (ածան հավ) և կամ աղնվացնող հավերի ձվերի հետ փոխանակում էին՝ մի ձվի դիմաց երկու սովորական ձու տալով, որպեսզի ավոդի աչքը ձվերի եռանից չլիներ։

Թխսկանի տակ ձու դնելուց առաջ այծի գլխի և պարանոցի շուրջը ձուն պատեցնում էին երեք անդամ, որպեսզի բնական օդեր (կլոր դեղիկներ) ունեցող ճտեր դուրս գային, մորուսավոր մարդը առջև կանգ էին առնում և խոսակցության բռնվում, մինչև որ ձվերը թխսկանի թևերի տակ դետեղեին, խոսում էին մորուսավորի հետ, ուստեղ հայտնի անել տալու, թե ինչ են կատարում։ Թխսկանի տակ դրված հարդի կամ խոտի վրա ոչխարի մոխիր էին ցանում և այլն։

Թխսկանի տակ դրված ձվերը անպայման թեl (կենտ) պետք է լինեին, ձվից նոր ելած ճուտիկներին պինդ խաշված ձվի դեղնուց էին տալիս։

Մեղվապահություն։ Ավանդություններ ասում է, թե բնության ծոցում առաջին անդամ մեղր և մեղու հայտնաբերողը արջն է եղել։ Ասում էին նաև, թե որսորդները, երբ դեռ հրացան կամ թուր գոյություն չի ունեցել, նետ ու տեղով և կամ պարսատիկով որս հետապնդելիս նկատել են, որ աշնանը արջը իր բոթոթներով, թշնամուց հալած-

վածի նման, գոռում-գոչումով դեպի մոտակա ձորն է վազում։ Դարան մտած որսորդները հետաքրքրությունից մղված սպասել են արջին հալածող թշնամու հայտնությանը, մյուս կողմից հետևել են արջի շարժումներին և տեսել, որ արջը հասնելով ջրին, բռնել է քոթոթներին և նետել ջուրը, ինքն էլ մտնելով ջուրը, պառկել կռնակին։

Որսորդներից մեկը սողնիսող իջել է ձորը և ծառերի արանքից դիտել արջի և քոթոթների շարժումները, հասկանալու համար, թե ինչից մղված է արջն իր ձագերով խորասուզվել ջրի մեջ ու դուրս չի գալիս, մանավանդ, որ ջուրը մտնելուց հետո այլևս առաջվա նման չեն գոռգոռացել, այլ մրթմրթալով լոգանք են առել։

Որսորդի զարմանքը կրկնապատկվել է, երբ տեսել է, որ ոչ մի դաղան չի երևում, իսկ արջը միշտ կռնակի վրա պառկած թույլ չի տալիս քոթոթներին ջրից դուրս դալ։ Երբ ավելի է մոտեցել մորն ու ձագերին, ականջին է հասել ճանճերի տզզոցը, որոնք խմբովին հարձակված են եղել արջի ու քոթոթների մարմինների ջրից դուրս մնացած մասերի վրա։

Տարօրինակ թվացող այս երևույթը որսորդին հարկադրել է վերադառնալ ընկերների մոտ և պատմել տեսածի մասին։

Երկար սպասելուց հետո արջն իր քոթոթներով դուրս է եկել ջրից և կրկին գնացել այն ճանապարհով, որտեղից եկել էր։ Որսորդները զգուշությամբ հետևել են դաղանների շարժումներին և նկատել, որ արջը ծայրահեղ զգուշությամբ է մոտենում հասա մի ծառի ընին և լիզում ծառը, իսկ քոթոթները սպասում են մոր հրավերին, որը չի ուշացել։ Մութը կոխելուց հետո, երբ ճանճերը թաքնվել են ծառի փչակում, արջն ու քոթոթները համարձակվել են կրկին մոտենալ ծառին և փոխանակ փչակի ծակը խառնելու, ծակից վար վազած մեղրն են լիզել։ Որսորդները դուրս են եկել իրենց թաքստոցներից և հալածել դաղաններին, ապա մոտենալով ծառին, տեսել են, որ մանանա է ծորում փչակի ծակից։ Ականջ են դրել ու լսել հաղարավոր ճանճերի մեղմ բզզոցը։ Անմիջապես կրակ են վառել ստուգելու մանանայի ակը և ճանճերի թաքստոցը. երբ ծուխ է բարձրացել, նկատել են, որ ճանճերը խմբովին դուրս են գալիս փչակից և դունդ-գունդ կծիկ կազմած կախվում մոտակա ծառերի ճյուղերից։ Պարզվել է, որ ճանճերը խույս են տալիս ծխից։ Նույն դիշերն իսկ դյուղից բթոցներ են բերել, ճանճերի կծիկները բթոցների մեջ լցրել և գյուղ փոխադրել, ու Երբ ծառը կտրել են և փչակի խորությունը բննել, տեսել են, որ մանանա կարծվածը բշիշների մեջ լցված, սակերևսը ծեփված անուշ մի հեղուկ է. իսկ ճանճ կարծված միջատները զբոնտատների ծաղիկների վրա մեղր դրած մեղուներ։

Ասում էին, թե այդ ձևով գտնված մեղուները պիքից հյուսված քթոցների մեջ դնելուց հետո փչակից հանված բշիշների մի մասը զետեղել են բթոցների մեջ և քթոցների բերնի կալանքի վրա մի փոքր ծակ են բաց արել։ Ասում էին նույնպես, թե մեղուների մի մասը մնալով քթոցների մեջ. չի հեռացել մեղրի տալախներից և այդպիսով արջի հետքերով գտնված մեղուն և մեղրը ժամանակի ընթացքում ընտելացել են իրենց նոր միջավայրին և աճել ու բազմացել մարդոց խնամքի տակ։

Սարդը տալիս էր բնակարան (ծղոր), մեղուն ինքն էր պատրաստում իր բշիշը (տալախ), լցնում մեղրով, ծեփում տալախները, որ մեղրը չհոսեր։

Դերսիմում մեղուն պահվում էր պիրից կամ ջրուռու թփերի մոլերից հյուսված ծղերում, որի բարձրությունը 1,20 մ, վերի մասի կլորության միջին տրամագիծը՝ 0,60 մ, մուտքի կողմը՝ 0,40 մ էր, ուր զետեղում էին մայր մեղվից (փեթակից) գուրս ելնող օղուլը (պարս)։

Ծղոր զրսի կողմից Իրիքով ծեփում էին, մուտքի կողմը հյուսված և միայն մեղուների մուտքի համար մի փոքր ծակ էր ձդված, որի առջև նույն մոլերից հյուսված բոլորաձև մասում մի պահ կանգ էին առնում ել ու մուտ անող մեղուները, իսկ մուտքի դռան երկու կողմերում աչալուրջ հրսկում էին պահակները, որոնք թույլ չէին տալիս օտար մեղուների մուտքը փեթակ, հալածում և սպանում էին ձրիակեր պիծակներին և ոչնչացնում իրենց ընտանիքին չպատկանող միջատներին։

Վերին մասը փակում էին նույն հյուսքն ունեցող կլոր կափարիչով, եղերքները ծեփում Իրիքով։

Ինչպես անասնապահություն, նույնպես և մեղվապահություն ուներ երեք շրջան՝ փեթկնոցի (քնի) շրջան, վերադարթնումի (տնամերձ) շրջան, ստեղծագործելու (դաշտային) շրջան։

Աշնան ցրտերը սկսվելուց առաջ տնամերձ բացօթյա վեթկնոցից փեթակները փոխադրում էին ձմեռային փեթկնոցը, որը գտնվում էր գոմին կամ մարագին կից առանձին բաժնում և փեթակները դարսում էին իրար վրա։ Տակի ծղերը դետեղում էին գետնից 0,30 մ բարձր փայտե հենակների վրա և այդպես բրդաձև տեղավորում բոլ-բոլի և վրա-վրա։

Դարեան առաջին օրերին մեղուները գուրս էին հանում փեթակներից և անգամորում տնամերձ լայնաթիւ փեթակներում։ Մայիսին տանում էին ծաղկամարգերը, ուր անցկացնում էին ամառը, իսկ աշնանը անդամփոխում էին անտամերձ բացութիւն փեթակները, ապա ձմեռ։

Էին։ Գաղափար են գնդրեր, որ արջը գողանալով փեթակը, տարել է ձորը և գցել ջրի մեջ, խեղդել է, եթե վախենում սառնել մեղուներին, ապա խորտակել կափարիչը և հանել մեղրը։

Շուտն ու կատուն վարժեցված էին մեղվաբուծութեան գործին, իսկ մեղուները հանա-



Նկ. 12 Փեթակ — ա. Դրդ

Ինչպես ոչխարն ուներ իր շունը, նույնպես և փեթակն ուներ իր փեթակի շունը և կատուն, մանավանդ կատուն, ամառ ու ձմեռ, անբաժան պահապանն էր մեղուների բնատեղիի, հսկում և պաշտպանում էր փեթակները վնասակար ամեն տեսակ սողուններից՝ օձերից, մկներից՝ մանավանդ վերջիններից։ Ամառ ու ձմեռ սրանք մեծ վնաս կարող էին պատճառել, եթե կատվի հսկողությունը չլիներ։

Տնամերձի շրջանում շունը հսկում էր, որ փեթակներին չմոտենան ագվեռներ, կղարիներ և այլ մանր գիշատիչներ, իսկ ամառանոցում, բացի փորը կենդանիներից, հալածում էին փեթակների շուրջը գեգերող արջերին, որոնք մեղրի սիրահար

չում էին և չէին խայթում ինչպես իրենց խնամող մեղվապահին, նույնպես և իրենց պաշտպան շանն ու կատվին։

Դարեան տնամերձ շրջանում, երբ առաջին ձայը գալիս էր մայր փեթակից և առանձին բնատեղիք կազմում, արտապրած մեղրը կոչվում էր աղուլ պալի, որը ամենահարգին էր։

Փեթակները կիներու ժամանակ լցուած էին տալիս, այսինքն՝ ամարի կտորներ էին դարսում հարդի վրա և վառում, որը բոց չէր տալիս, այլ խեռ և կծու ծուխ, որից խույս էին տալիս մեղուները և հնարավորություն ստեղծում մեղվապահին տալխները կարելու նեղմամի ակիչով։

Մայիս և հունիս ամիսներին փեթակների ա-

ռաչ դնում էին սպանված օձ։ Մի ժամվա ընթացքում մեղուները օձի միսը այնպես էին քրքրում և ուտում, որ քիչ հետո կմախքն էր միայն մնում։

Օձի մսով սնված փեթակների մեղրը (մերղ) առանձին էին պահում, որպես ստամոքսի հիվանդության բուժիչ դեղ։

Վաղ դարնանը, երբ դեռ ծաղիկների կոկոնները չէին բացվել, ու եթե ժամանակը անձրևոտ կամ հողմաբեր էր, մեղուներին կերակրում էին խաշված և կարագ-յուղի մեջ խորոված վառյակի մսով, որը շատ էին սիրում մեղուները։

Ընդունված չէր մեղուներին շաքար կամ հավելյալ մեղր տալը մեղրի կթի ժամանակ։ Մեղվարույծը նկատի ունենալով փեթակի մեղուների որակը, քանակը և սպառելու կարողությունը, ըստ այնմ բավարար մեղր էր թողնում։

Վարպետ մեղվապահը մեղուների ձայնից հասկանում էր պարսի դուրս գալու ժամանակը և միջոցներ ձեռք առնում, որ ձագը դեռ փեթակից չհեռացած, առնի հատուկ հյուսված այն փոքր սակառի մեջ, որը նախապես մեղրով օծված և բարակ ու երկար մի ձողի ծայրին էր կապված լինում։

Իսկ եթե պատահեր, որ պարսը հեռանար փեթակից, մեղվակծիկի ծանրության հետևանքով շատ հեռու գնալ չէր կարող, մոտակայքում որևէ ծառի ճյուղին տեղ էր դրավում և խաղողի ողկույզի նման կախվում։ Պարսին հետևող մեղվապահն իր ձեռքի ձողով, որի վրա ամրացված էր լինում մեղրոտված սակառը, բարձրացնում և մեղուները սակառի մեջ առնելուց հետո, ճյուղը ցնցում էր ու մեղվակծիկը վար առնելով, բերանը փակում։ Եթե հատ ու կենտ մեղուներ անչատված էին լինում պարսից, նրանք էլ հետևում էին մայր թաղուհուն, որը կծիկի կենտրոնում էր լինում և հնարավորություն չուներ կծիկից դուրս գալու։ Այդպիսով փոխադրում և ղեկեղում էին նախապես պատրաստված ծղի մեջ։

Փեթակը տարին երեք անգամ պարս էր տալիս, որ ամենաղորավորն էր լինում, շուտով կազմում էր իր ըջիջները և անցնում մեղրի պատրաստության, երկրորդը՝ միջակից քիչ ավելի էր և ինքնաբավ, իսկ երրորդը՝ առհասարակ տկար էր լինում, որը ավելացնում էին երկրորդին և կամ միաժամանակ դուրս եկող երրորդ պարսերը միացնում և երկու պարսից մի փեթակ էին կազմում։

Երրորդ ծնունդով աշխարհ եկած պարսերը թեև ունեին իրենց առանձին թաղուհիները, բայց երբ միացվում էին, թաղուհիներից տկարը արտաքսվում կամ սպանվում էր, որով փեթակը կառավարվում էր մի մայր թաղուհու կողմից և դառնում զորավոր։ Նման պարագաներում ծրղը օծում էին խաշած վայրի դաղձի (անանուխ) ջրով, որով բոլոր մեղուները նույն հոտն էին առնում և միմյանց հետ չէին կռվում։

Քամիները վնասում էին մեղուների զարգացմանը։ Մեղվապահը փեթակների համար ընտրում էր այնպիսի փեթկնոց, ուր քամի չէր բռնում, առհասարակ ձորամիջերում ապրող մեղուներն ավելի առողջ էին լինում։

Վնասակար թռչուններից փեթակները պաշտպանելու համար, դրանց կենտրոնում, բարձր մի ձողի վրա դեռեղում էին զմռսված բազե։ Ճանճկուլը, սարյակը, նույնիսկ ճնճղուկը սարսափում էին բարձրում թառած բազեի կերպարից և խուսափում մոտենալ փեթակների սահմաններին։

Փեթակները շար աչքից, շար նաղարից պաշտպանելու համար փեթկնոցի դռան վրա կախում էին կապույտ ուլունք, փոքր խխունջի պատյաններ, մի գլուխ սխտոր և մի պայտ, իսկ հիվանդություններից ղերծ պահելու համար խոստանում էին մեղուների պաշտպան սրբի տաճարին նվիրել ամեն մի փեթակից մի օխա մեղրամոմ (ամեն շրջան մեղուների պաշտպան իր սուրբն ուներ)։

Տալաիից հանված շեշը (մեղրամոմ) օգտագործում էին ժողովրդական բժշկության, տնային լուսավորության և եկեղեցիների ու վանքերի սրբերի պատկերների առաջ վառելիք մոմ պատրաստելու համար, որը ևս կոչվում էր մեղրամոմ։

Մեղրամոմը մեղրից ավելի արժեքավոր հարստություն էր դիտվում։ Ապրանքափոխանակության գլխավոր միջոց և լայն սպառման շրջանակ ունեցող մեղրամոմը մեղրից ավելի հեշտ, ավելի սուղ և ավելի արագ էր սպառվում։

Ըստ փորձառու մեղվապահների հավաստիացումների, ժրաջան ու աշխատասեր մեղուների ընտանիքը, որ համերաշխորեն կառավարվում էր մայր թաղուհու կողմից, կազմված էր տասներկու աշխատանքային խմբերից, որոնք ոչ թե նշանակվում, այլ այդ հատկություններով ծնվում էին։ Ըստ այդ վկայությունների, փեթակի մեղուների աշխատանքային խմբերը, առանց մեկը մյուսի աշխատանքը խանգարելու, բնազդաբար կատարում էին իրենց պարտականությունները, հետևյալ կարգով՝ ըջջագործներ, պահակներ, թաղուհու թիկնապահ պահակախումբ, ծաղիկներից հյութ բաղողներ, ջրկիրներ, փեթակը մաքրողներ, ներնդպսրծողներ (որոնց սպանում էին իրենց պարտականությունը կատարելուց հետո, ո-

լովհնաև ձրիակեր էին), մեղր պատրաստողներ, դիակիրներ (ապանված կամ սատկած մեղուները փեթակից դուրս տանողներ), ալյախները մածուցիկ հյութով ծեփողներ և այլն։

Վայրի դազձի յուրը հականեխիչ հատկություն ուներ։ Դազձը առանց որևէ խառնուրդի լավ խաշում էին պտուկի մեջ, խուփը խմորով ծեփում, որ շողիս դուրս չգար, յրով և իր շողիով եռացած դազձը մի որ պահում խաշված յրի մեջ, ապա բանում և փեթակների վրա սրսկում, երբեմն էլ ծրդի մուտքի դռան առաջ փորը տմանով դազձաջուր դնում մեղուների համար, որոնց մի մասը այդ յրից խմում էին, բայց ոչ բոլորը։

Լեռնաշխարհի փեթակներից ստացված մեղրի միջին բանակը ամեն մի փեթակի համար 5 լիտր (լիր) էին հաշվում, իսկ առավելագույն չափը՝ 8 լիտր։ Եկատի ունենալով, որ մի լիտր հավասար էր թրքական վեց հոխային, մեղրի արտադրությունը տարուներվում էր 30-ից 50 հոխայի միջև (ամեն մի փեթակի համար)։

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Լեռնաշխարհում որսորդությունը մնում էր իր նախնական վիճակում, հատուկ միություններ ու կազմակերպություններ չկային, ոսկայն պահված էին որսի անգիր կանոնները, որոնք ավագ և փորձառու որսորդների կողմից ավանդաբար հաղորդվում էին նորահասներին։ Դրանց պահպանմանը հսկում էին տարիների փորձառություն ունեցող ծեր որսորդները։ Ամեն մի նոր որսորդ պարտավոր էր երդվել ավագների առջև որսի կանոնները չխախտելու համար։ Ավանդական կանոնների հիմնական կետերը հետևյալներն էին՝

1. Արգելվում էր դեռ արձակել (նույնիսկ վախեցնելու համար) առհասարակ բոլոր կենդանիների և թռչունների ձագեր ունեցող մայրերի վրա։

2. Թռչունների որոր արտոնված էր հին տոմարով օգոստոսի մեկից մինչև փետրվարի վերջը։ Մարտի մեկը, որպես զորնանամուտի տոն, դիմավորել բնհանուր խանդավառությամբ և դեռները յուղելուց հետո ձեռ չառնել մինչև արտոնված նոր շրջանը։

3. Ջոպանել արաղիլին, կռունկին, վայրի աղավնուն, կարապին, անդուռին, սոխակին, սարյակին և ծիծեռնակին։

4. Արգելվում էր կոտորակներով թռչուն խփելը, դա նկատվում էր նամարդություն և թռչունների կոտորած։

5. Ջոպանել էդ եղնիկներին (լիներ մայրության շրջանում կամ ոչ), վայրի կատուներին, նապաստակներին։

Ուստի կանոնները չհարգող որսորդի գեները գրավվում էր, և միրոջը մի տարով արգելվում որսի գնալ, անկախ այն ծայրահեղ պատժից, որ ինքը՝ որսի փիրը, տալիս էր անհնազանդներին։

Լեռնաշխարհում որոր առատ էր, որսորդությունը՝ անսահմանափակ, վերի կանոնների սահմաններում։

Դերսիմում եղած վայրի կենդանիներն էին՝ գազաններ և կրծողներ՝ արջ (մախրագույն), գայլ, հովազ, սև արջ, լուսան, ազվես, սկյուռ, հարանուկ, վայրի կատու, նապաստակ, փորսուղ (փորսոդ), իշխան, վարազ, կղարիս (որի մորթը շատ արդի էր)։

Կենդանավոր վայրի կենդանիներ՝ ցուլ (հազվադեպ), ծամոր եղջերու, եղնիկ, այծյամ (բարայծ), ոչխար, խոյ։

Վայրի թռչուններ՝ թոյ, սագ, բաղ (տարբ տեսակից ավելի), անդդ, արծիվ, ուրուր, բաղն, փասյան (ֆազան), վայրի հավ, վայրի արաղաղ, կարապ, անդուռ, կարավ, չիռ-կարավ, վայրի աղավնի, կռունկ, արորիկ, հալվորիկ, ռարյակ, սոխակ, ծիտ (լեռնային, հիսուն տեսակից ավելի, զանազան գույնի), էվեիկ, տատրակ, լոր, կռունկ, արաղիլ, կռա-կռա, ագռավ (զանազան գույնի ու մեծության), ճանկ, ծիծեռնակ և այլ երգող, սուլող զանազան թռչուններ։

Հակառակ որսորդների կատարած սպանություններին, որոր բանակը փոխանակ նվազելու ավելանում էր։ Քարայծերը, վայրի խոյերը, ոչխարները և եղնիկները սարից-սար, անտառից-անտառ էին շրջում մեծ խմբերով միայն հովազների թիվն էր սահմանափակ, համեմատած գայլերի և արջերի հետ։ Գայլերի թիվը անհամեմատ ավելի մեծ էր, քան արջերինը։ Վարազների, նապաստակների, խոզկորների առատությունը, երկրի բնական դիրքը, կլիմայական պայմանները, վայրի պտուղներով հարուստ կուս անտառների առավելությունը նպաստում էին վայրի կենդանիների բազմացմանը։

Հակառակ մի շարք վայրի գազանների մարդոց հասցրած չարիքներին, դերսիմցիները լեռնաշխարհի զարդն էին նկատում դրանք. դերսիմցին չէր կարող պատկերացնել առանց արջի անտառ, առանց բարայծի ապառաժ, առանց գայլի սար։

Արջի, գայլի հովազի, բարայծի, ոչխարի որոր առհասարակ կատարվում էր համագործակցական